

Բաժանորդագրին կԱՆԻԻԿ Թուրքիոյ Համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 Ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ' կ'ընդունուի՝ 1 զրշ.նոցը 34 փարայի հաշ- ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱՂԱՍԿԱՆՅԱՆ
Պոլիս, Պաշկէ-Գարու, Թաշխան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Ք Ի Ր

درعليهده بفتح قوسنده طاش خاند
•• نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 28

ՇԱԲԱԹ

25 ԱՊՐԷԼ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանա- կութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը- րապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըր- նան արտադրիչներն ապահովել ֆո- խադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներ- քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ- տար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրա- նաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ- ղուին առ Յ. Պ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ գարու, Թաշխան, քիւ 50:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԵՐԶ

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ԳՈՒՆԱԻՈՐ ՏԱԽՏԱԿՕՔ

Ի ՊԷՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՁԱՐԱՆԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Բազմաթիւ ուսուցիչք և վարժարանաց Տնօրէնք սոյն դասագրքին հրատա- րակութեան փութացումը խնդրած լինելով, կը յայտարարեմք թէ տպագրու- թիւնն աւարտած է և այս պահուս Պաղատեան տպարանը կ'զբաղի գրքին մէջ գետեղուելիք աշխարհացոյց գունաւոր տախտակաց պատրաստութեամբ:

Ձանազան վարժարաններէ եղած ստիպողական խնդրանքներուն գոհացում տալու համար, սոյն դասագրքը այժմէն իսկ հրապարակ ելած է և յանձնարա- րութիւնք սկսած են կատարուիլ՝ աշխարհացոյց տախտակներն յետոյ առանձինն շրկուելու պայմանաւ: ամէն ոք կարող է գանոնք դասագրքին մէջ ինքնին գե- տեղել:

Դասագրքիս կանխաւ որոշուածէն շատ աւելի ստուար և բազմաժախ եղած լինելով, առ այժմ պիտի վաճառի ի գին 4 զրշ, իսկ աշխարհացոյցերու տպագրու- թիւնն աւարտելէ յետոյ 6 զրշ: Մեծաքանակ յանձնարարողներու համար՝ աշխար- հացոյցներն յետոյ առանձինն պիտի շրկուին, կը բաւէ որ 2 զրշ տարբերութիւնը վճարուի:

Դասագրքիս օգտակարութեան մասին խօսին աւելորդ կը համարիմք, ու- սուցչաց թողով գնահատել այն բանաւոր և դիւրութեան եղանակն որով աշխար- հագրութիւնն աւանդուած է այս Դասագրքին մէջ, տպագրութեան, թուղթին, պատկերներու և աշխարհացոյցներու գեղեցկութիւնն, Օսմանեան Պետութեան համար տրուած ընդարձակ բաժինը, մանաւանդ այն մասնաւոր պատկերացոյց տախտակը որուն մէջ յատկորէն ի տես եկած են ցամաքաց և ջուրց զանազան ձեւերն, որոց առընթեր գունաւոր գծագրութիւններով ցոյց տրուած են նաեւ թէ ինչպէս կը գծուին կամ կը ներկայացուին անոնք աշխարհացոյց տախտակ- ներու վրայ, բան մ'որ բոլորովին նորութիւն է և, գործոյն ուրիշ առաւելու- թեանցը հետ միանալով, կրնայ այս դասագրքին իւր տեսակին մէջ միակը հան- դիսացնել:

HÔTEL DE PARIS
BUDAPEST, Vazi-koor

Պիւտարէշթ քաղաքի ամենագլխաւոր կեդրոնի վրայ հաստատուած այս ա- ռաջնակարգ հիւրանոց ամէն յարմարութիւն ունի ճանապարհորդաց հանգստու- թեան համար: Խոհանոց եւրոպական և թրքական: Թուրքիացի ճանապարհորդք այս հիւրանոցը կ'իջևանին: Գիները դիւրամատչելի:

ՖԱՆԵԼԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄՈՒՆԵՐԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Քիւրքի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է
ի Պահէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ Թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
և տղայոց համար՝ անխառն
բրդէ, մանածէ, ևայլն, ուզ-
ուած թանձրութեամբ և ուզ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին Փանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուներ, ևայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ Թէ՛ աժանու-
թեամբ, Թէ՛ դիմացկունու-
թեամբ և Թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

24—24

Մոքրատեան Մկրտիչ եւ Յովնանեկ եղբայրց փաճառատոռնը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրլէմպէ բազար,
Մահմուտիյէ—Ճատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ռուսական կախիկաղաղիք (ասամ քիլի-
տի), հիւսան (տիւլիէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ
ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիներ, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մե-
քենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:
Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բե-
րել կուտանք և ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԲԱՐԳ

22—24

70, Եօրկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ԵԱՎԴԱՆԻՅԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պահիւ—Գաբու, ճէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10



Ձմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վա-
ճառատան մէջ պատրաստ կը գտնուին Չինէ
և Ճապոնէ ուղղակի հասած նոր բերք՝ զա-
նազան տեսակ գերբնտիր և աղնիւ ու անու-
շարոյր ամէն ճաշակի յարմար: — Ծաբոնա-
կան, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ
մեծութեամբք եւ ձեւերով թէյի տուփեր,
գեղակերտ և նկարազարդ — Յաճախորդաց
գոհացում տալու համար բնաւ քանք չխնա-
յուիր: — Յանձնարարութիւնք կը կատար-
ուին փութով և ճշգրութեամբ: — Գիները

որոշ եւ խիստ չափաւոր: — Չի՛ք սակարկութիւն:

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԳԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԿԼԽՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ
կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփրիպլիք փողոց,
Լիոն (Ֆրանսա)

Ապահովագրութիւն 100,000 000 ֆր

ԼՎԱԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպաստե-
լու համար փոքր խնայողութեանց, ա-
րագ զարգացում մը ունեցած է: Իւր
նպատակն է որոշեալ պայմանաժամի
մէջ վերականգնել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք
բազմադիմի են, ինչպէս շարժական ար-
ժէից և փոխ տրուած դրամագլխոց ա-
պահովագրութիւն, կորուսեալ դրամա-
գլխոց մը վերականգնութիւն: Երաշխա-
ւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառու-
թեանց և ճարտարութեանց և վաճա-
ռականութեան մէջ գործածուած դը-
րամագլխոց, մանկանց համար օժիտք,
հանգստեան անտուկ ծերութեան հա-
մար, ցկեանս եկամուտներու կազմու-
թիւն, ի մի բան այն ամէն գործառ-
նութիւնք որոց նպատակն է խնայողու-
թիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակա-
լութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդա-
գրութեան համար դիմել առ Բարսեղ
էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկե-
րութեան ի Կ. Պոլիս, Պահիւ—Գաբու,
Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

ԳՐԱՏՈՒՆ

Կազմատուն եւ Թղթավաճառանոց
ի Կեսաբէա

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՊԱՇԱԶԻՐԿԵԱՆԵԱՆԻ

Հաստատեալ 1877

Հայերէն, Թրքերէն և Ֆրանսերէն
գրքեր և դասագրքեր: — դպրոցական
և գրասենեկի պիտոյք: — այլ եւ այլ
տեսակ թղթեր, ևլն, ևլն:

Գրատունս արդէն բազմաթիւ հե-
ղինակաց և գրավաճառաց հետ զանա-
զան պայմաններով ուղղակի յարաբե-
րութեան մէջ լինելով պատրաստ է
գործ ունենալ ամէն Մեծ հեղինակաց
և գրավաճառաց հետ՝ որք կը գտնուին
ի Պոլիս և այլուր: ուստի կը հրաւի-
րեմք զնոսա և ամէն գրասէրներ դիմել
գրատունս ուր նորանոր միջոցներ ու-
նիմք ի ձեռին՝ գոհացնելու մեր ամէն
կարգի յաճախորդները ամենաչափաւոր
գներով:

3—9

Բաժանորդագիրն կԱՆՈՒՆ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ՝ կ'ընդունուի՝ 1 լրշ.նոցը 34 փարայի հաշ-ւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ:

ԾԱՂԻԿԻ Վերաբերեալ ամէն գործի համար չիմեւ

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳ-ՍՇԵՍՆ
Պոլիս, Պաշէ-Գաբու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بنجه قوسنده طاش خاندہ
• نومروده « زاغیک » غزته سی مدیری
بالا قاشیان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 28

Շ Ա Բ Ա Թ

25 Ա Պ Ր Ի Լ 1892

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսէն կը հեռագրեն մեզ թէ Սինօղը վերջին պահուն՝ ապօրէն կերպով գումարուած նստի մը մէջ՝ բեկանելով մարտ 8ին ի Թիֆլիս տեղի ունեցած թեմական պատգամաւորի օրինաւոր ընտրութիւնը, ապրիլ 22ի չորեքշաբթի օրը նոր ընտրութիւն կատարուեր եւ Գրիգոր Արծրունի ընտրուեր է պատգամաւոր: Այս նոր ընտրութեան չեն մասնակցեր գաւառաց ներկայացուցիչք, արդէն իրենց տեղերը դարձած և ցրուած լինելով. չեն մասնակցած նաև Թիֆլիս քաղաքի թաղերէն ընտրեալ ներկայացուցիչներու մեծ մասն՝ օրինաւոր համարելով մարտի 8ի քուէարկութիւնը որով ընտրուած էին Արգար Յովհաննէսեան եւ Սպանդար Սպանդարեան: Ուրեմն վերջին ընտրութիւնը կատարած են Գրիգոր Արծրունեոյ փոքրամասն կուսակիցք միայն, ընդ նախագահութեամբ ո՛չ թէ թեմական Առաջնորդին, ինչպէս օրէնքը կը տրամադրէ, այլ Սինօղի նոր անդամ Աղուանեան Գրիգորիս եպիսկոպոսի՝ որ յատկապէս Թիֆլիս եկեր է էջմիածնէն, այս ընտրութեան համար:

Արեւելք ևս ստացած է հեռագիր մը, ծանուցանող թէ «Արծրունի ընտրուեցաւ Սինօղի նստմամբ և օգնութեամբ»: Ուրիշ հեռագիր մը ևս ստացած է որ կ'ըսէ. «Ընտրուեցաւ Արծրունի»: Եւ կ'ենթադրէ Արեւելք որ իւր ստացած առաջին հեռագրին մէջ սխալ մը կայ, և թէ ճիշդն այս պիտի լինի որ «Արծրունի ընտրուեցաւ պատգամաւոր, և պատգամաւորի փոխանորդ եղաւ Արգար Յովհաննէսեան»:

Արեւելք կը յաւելու. «Այսպէս կարծելու պատճառ ունինք, ինքնապատուով այն դերագոյն ճիգերն ու միջոցները զորս ծանօթ եղանակաւ ի դործ դրին յէջմիածին և ի Տիֆլիս՝ Վրաստանի և Իմէրէթի Գեր. Առաջնորդին վաւերական ճանչած ընտրութիւնները բեկանելով, և իբրև ապօրէն բեկած ընտրութիւններն օրինաւոր ճանչելով, և ամէն բան ընելով, որպէս զի մէկ երկու քուէի տարբերութեամբ՝ Պ. Գրիգոր Արծրունի առաջին ընտրուի և Պ. Արգար Յովհաննէսեան՝ երկրորդ»:

Նոյն պարագայից և ազդեցութեանց բերմամբ Ռուսաստանէն եկած հեռագրոյ մը վրայ, Գեր. Օրմանեան Սրբազան երեքշաբթի օր չկրցաւ մեկնիլ մայրաքաղաքէս, թէև անցագիրը տրուած, տեսնուած և վաւերացուած, և ուղեւորութեան ամենայն պատրաստութիւնք կատարուած լինցած էին, Գեր. Օրմանեանի այս աւուր աւըստրիական շոգենաւով մեկնիլն իսկ տարակուսելի է, և եթէ այսօր չը կարենայ մեկնիլ, այլ ևս մեկնիլն անօգուտ է, վասն զի ժամանակին չէ կարող հասնիլ:

Վերջին պահուն կը լսեմք թէ Գեր. Օրմանեան այսօր կը մեկնի յ'էջմիածին:

— Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Ս. Արքեպիսկոպոս՝ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար իւր կողմանէ փոխանորդ կարգած է Քէօթահիոյ Առաջնորդ Գեր. Պօղոս Ծ. վարդ. խօլտամեանն:

— Շապին Գարահիսարի գաւառական ժողովն նոյն վիճակին համար եկեղեցական պատգամաւոր ընտրած է զԳեր. Մաղաքիս եպիս. Օրմանեան,

թէև օրէնք է որ գաւառի մը եկեղեցական պատգամաւորը Առաջնորդը ինքըն իսկ պիտի լինի կամ իւր կողմանէ կարգեալ փոխանորդ մը:

— Էնկիւրիի Պատրիարքական Փոխանորդ Արծ. Եղիշէ վարդ. Գալֆայեանի կողմանէ եկեղեցական պատգամաւոր կարգուած է Սիվրիհիսարցի Տ. Խորէն քահանայ վարդեբեան, որ արդէն մայրաքաղաքս եկած էր էջմիածին ուղեւորելու համար:

— Վանայ վիճակէն աշխարհական պատգամաւոր ընտրուած է տեղւոյն գաւառական ընդհանուր ժողովոյ ատենապետ Մեծ. Մանուէլ էֆ. Անանեան, Բալուի վիճակէն՝ Կարապետ էֆ. Խօջմաթլեան:

— Գաւառաց ոմանց եկեղեցական ու աշխարհական պատգամաւորք տակաւին ճամբայ ելած չլինելով, Ս. Պատրիարք Հայրը երկուշաբթի օր հեռագրեր ուղղեց, յանձնարարելով որ փութացնեն իրենց մեկնումը:

— Կաթողիկոսական Գեր. Տեղական Հրամայեր է բեկանել թէհրանի թեմական պատգամաւորի ընտրութիւնն որ անկանոն նկատուած էր Սինօղին կողմանէ և հրամայեր է նոր ընտրութիւն կատարել: Թէհրանի, Ղազվինի և Ռէշտի ծխական պատգամաւորաց ընտրութիւնք կատարուած են արդէն:

— Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկոպոս Չամչեան ուրբաթ օր Կայս. Պալատ գնաց ի ընդհանրութիւն Պայրամի տօնին և առաջին սենեկապետ Վըսեմ. Հաճի Ալի պէյի կողմանէ ընդունուելով, ն. Վսեմութեան միջոցաւ արժանացաւ կայսերական մեծարանաց: Ն. Գերապատուութիւն նոյն օրը ընդհանրական այցելութիւններ տուաւ Բարձր. Մեծ. Եպարքոսին, նախկին Մեծ Եպարքոսաց և նախարարաց, ինչպէս նաև գաղթականաց վարչութեան նախագահ Վսեմ. Րիզա փաշայի:

— Ս. Պատրիարք Հայրն և Քաղաքական Ժողովոյ ատենապետ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյ Պայրամի երկրորդ օրը շնորհաւորական այցելութիւններ տուած են նաև Շէյխ-իւլ-Իսլամ Բարձր. ձէմալէտտին էֆէնտիի, նախկին Մեծ-Եպարքոսաց, ներքին գործոց նախարար Վսեմ. Խալիլ Րիֆաթ փաշայի, Կրթական նախարար Վսեմ. Զիւհտի փաշայի և գաղթականաց վարչութեան նախագահ Վսեմ. Եուսուֆ Րիզա փաշայի:

— Կրօն. Ժողովը իւր վերջին նստին մէջ որոշեց Պատրիարքարանի իրաւասութեան ենթարկեալ քահանայից չարքին մէջ արձանագրել Իսահակեան Գեր. Սահակ եպիսկոպոսէն ձեռնադրեալ Փափազեան Արթ. Տ. Եղիշէ քահանայն, որ վերջերս կը պաշտօնավարէր յէլէվի գիւղ Տրապիզոնի և որ այժմ մայրաքաղաքս կը գտնուի:

— Կիւրակէ օր, Հայ-Հռոմէականաց Ղալաթիոյ Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ, ի ձեռն Ազարեան Ս. Պատրիարքի եպիսկոպոս ձեռնադրուեցան Տ. Սահակ վարդապետ՝ Եւդոկիոյ և Սեբաստիոյ վիճակաց վրայ, և Տ. Պօլոս վարդապետ՝ Ատանայի վիճակին վրայ:

— Մանչէսթըրի Հոգեւոր Հովիւ Գեր. Սուքիաս վարդ. Պարոնեան հրաժարած լինելով, Կրօն. Ժողովը որոշեց հետեւեալ եկեղեցականներէն բաղկացեալ ընտրելեաց ցանկ մը զրկել տեղւոյն ազգայնոց. Տ. Եգնիկ Ծ. վարդ. Գալբադէան, Տ. Մաղաքիա Ծ. վարդ. Տէրունեան և Տ. Վահան Ծ. վարդ. Յակոբեան:

— Պէշիկթաշի եկեղեցւոյն Քարոզիչ կարգուած է Խասգիւղի եկեղեցւոյն Քարոզիչ Գեր. Յակոբ Ծ. վարդ. Աշոտ:

— Ըստ որոշման Կրօն. Ժողովոյ, Շապին Գարահիսարի Անդրէաս գիւղին քահանայ պիտի ձեռնադրուի Աթանաս Տէրտէրեանց:

— Կրօն. Ժողովը որոշեց Սեւանիկի ազգայիններն յեկեղեցատիրութիւն և ի կրօնատիրութիւն հրաւիրող Պատրիարքական Կոնդակ մը զրկել:

— Քաղ. Ժողովը որոշեց իւր յառաջիկայ նստին ի խորհրդակցութիւն հըրաւիրել Միացեալ Ընկերութեանց Հիմնադրաց Ժողովոյ և Տնօրէն Ժողովոյ ղիւաններն:

— Ատաբաղարի Վազֆի խնդրոյն կարգադրութեան առթիւ, տեղւոյն թաղ. Խորհրդոյ կողմանէ եկած գիրէ մը՝ Քաղ. Ժողովը հասու լինելով այդ մասին ժողովականներէ Մեծ. Ասասեան էֆէնտիի ի գործ դրած ջանքերուն, չընդհակադրութիւն յայտնեց նմա:

— Կրօն. Ժողովը ընտրելեաց ցանկ

պիտի պատրաստէ՝ Արաբկիրու վիճակին առաջնորդական ընտրութեան համար:

— Տիվրիկի կալուածոց նորակազմ Հոգաբարձութեան անդամներէն Կիւլպէնկեան Մեծ. Կիւլպէնկ և Խորասանձեան Մեծ. Խաչիկ էֆէնտիներն հրաժարած լինելով, Քաղ. Ժողովը մերժեց այս հրաժարականներն և որոշեց հրաւիրել զանոնք ստանձնելու իրենց յանձնուած պաշտօնը:

— Քաղ. Ժողովը մերժեց նաև Բերայի Թաղ. Խորհրդոյ անդամակցութեանէն Սարաֆեան Մեծ. Յարութիւն էֆէնտիի մատուցած հրաժարականը:

— Տնտես. Խորհուրդը կեդրոնական համարակալին յանձնեց Իւսկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ մատակարարութեան հաշուեցոյցն ի քննութիւն և ի տեղեկագրութիւն: Նոյնպէս որոշեց ինչ ինչ դիտողութեամբ վաւերացնել Մայր Եկեղեցւոյ մատակարարութեան հաշուետու մարները:

— Սամաթիոյ առժամանակեայ Թաղական Խորհուրդը թաղին երկսեռ վարժարանին համար հետեւեալ անձերէն բաղկացեալ Հոգաբարձութիւն մը կազմեր է. Գառնիկ էֆ. Արաւիր, Տոքթ. Մ. էֆ. Վարդապետեան, Յովհաննէս էֆ. Կրճիկեան, Յովհաննէս էֆ. Սամուէլեան, Պարզե Էֆ. Փափազեան և Ստեփան էֆ. Աքթարեան:

— Դպրոցատէր Տիկնանց ընկերութիւնը Եէնի-գաբուլի հրկիզեալ ընտանիքներէն աղջիկ մը որդեգրել փախագելով, տեղւոյն Թաղական Խորհրդոյ ընտրանօք որդեգրեր է 13 տարեկան աղքատիկ աղջիկ մը, իբր գիւղերօթիկ դաստիարակելու համար ընկերութեան վարժարանին մէջ ի Գոււմգաբու:

— Զմիւռնիոյ առաջնակարգ Հայ վաճառականներէն Սարգիս էֆ. Սիւրիճիսարեան՝ ամսոյս 16/28 անցեալ հինգշաբթի առաւօտ անձնասպան եղեր է ի Գարաթաշ, հրագէտի հարուած մը պարպելով իւր քունքին: Հանգուցեալը 47 տարեկան է եղեր, ամուսնացեալ և զաւակաց հայր: Հանգուցելոյն վաճառատունը որոշած է շարունակել իւր գործը «Սարգիս Սիւրիճիսար» անուամբ և իւր աներորդի Միհրան էֆ. Ազնաւորեանի տեսչութեան ներքեւ:

— Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն հինգշաբթի օր Արդարութեան գործոց պաշտօնատունը գնաց և Եէնի-գաբուլի հրկիզելոց նպաստի բաշխման խնդրոյն առթիւ տեսակցեցաւ նախարար Վսեմ. Րիզա փաշայի հետ: Ն. Վսեմութիւն ծանոյց թէ այդ նպաստներու բաշխումը չուտով պիտի սկսի:

— Ուսումնական Խորհրդոյ ատենապետ Վսեմ. Օհան էֆ. Պաղտատ.

լեան իւր զբաղմանց պատճառաւ հրաժարած է նոյն Խորհրդոյ անդամակցութենէն:

— Կ. Պոլսոյ թեմին աշխարհական պատգամաւոր Կիւմիւշկէրտան Տիգրան էֆէնտի ապրիլ 13ին Պաթում հասեր, երկու օր հոն մնալէ յետոյ Թիֆլիս գացեր և անկէ ալ էջմիածին ուղևորեր է:

Մ Ե Ս Ր Ո Պ Ն Ո Ւ Պ Ա Ր Ե Ա Ն

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

(Պաղտատեան Տպագրութիւն)

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ սոյն ընդարձակ բառարան, այնչափ գովեստիւք գնահատեալ շատ մը ձեռնհաս անձերէ, աւարտած է բոլորովին:

Իւր ճոխագոյն պարունակութեամբ, հայերէն համանշանակներու ճշդութեամբ, շատ մը նորակերտ և գաւառական բառերով և ճշգրտաբար՝ բաղմախատ հեղինակին սոյն երկն անհրաժեշտ գործի մ'է թէ՛ թարգմանաց, թէ՛ ուսանողաց, և թէ՛ առ հասարակ ամէն անոնց որք կ'զբաղին ֆրանսերէն լեզուով:

Ֆրանսերէնի մէջ գործածական բոլոր բառերն, ոճերն ու ասացումներն հաւաքելով, և դնելով անոնց ամէնուն ալ ճշգրտոյն նշանակութիւնները, զանազան առումներն և համապատասխան հայերէն նշանակութիւններն, ի հարկին թուրքերէններն ևս, նուպարեան էֆէնտի յօրինած է շատ հարուստ, շատ կատարեալ գործ մը, արդիւնք երկարժամանակեայ աշխատութեանց, անդուլ խուզարկութեանց և խզամիտ ու խմաստուն հետազօտութեանց:

Գործոյն կարեւորութեան կը համապատասխանէ նաև տպագրութիւնն, որ Պաղտատեան տպարանի խնամեալ արտադրութեանց մին է և կը կազմէ ըստուար և գեղեցիկ հատոր մը, ճոխագոյն մատենադարանաց մէջ ընտիր տեղ մը գրաւելու արժանի:

Մինչեւ յառաջիկայ փետրուար 20, որոշուած է անփոփոխ պահել նուպարեան Բառարանին գինը, 20 ֆրանք:

Գաւառներէն ուղղոյնքը պէտք է դիմեն «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին. Փօստի ծախուց համար ծովեզերեայ քաղաքներէ պէտք է զրկել 6 շրջ, ներքին քաղաքներէ՝ 8 շրջու:



ԴԱՐՁԵԱԼ Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ՎԱՆՔ

ՄԵՐՁ Ի ԳԱՆՁԱԿ

Անցեալ շաբաթու լաւի մը տողեր նը-
ուիրած էինք Գուգարաց աշխարհին մէջ
մեր ունեցած պատմական հին վանքե-
րէն միոյն նկատմամբ:

Բանասէրներէն ոմանք՝ Գանձակի
նահանգի յիշեալ Ս. Թարգմանչաց վան-
քըն անշուշտ չփութած լինելով Մշոյ Ա-
ռաքելոց կամ Թարգմանչաց վանուց
հետ, որ միանգամայն Ղազարու վանք
ալ ըսուած է աշխարհագրութեան մէջ,
առ մեզ մի քանի վարկարար գիտո-
ղութիւններ ուղղած էին. ոմանք ալ
աւելի ընդարձակ տեղեկութիւններ
խնդրած՝ առարկելով թէ Մասիսի մէջ
մեր յարգոյ բանասերներէն Պ. Հրանտ
Ասատուր՝ ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ վերնագրեալ
յօդուածի մը մէջ՝ մինչդեռ յիշած է
Եւրոպայի, Ամերիկէի, Միջերկրական
ծովու կղզեաց մէջ մեր ունեցած տաս-
նէ աւելի Հայ վանքերն և կուսաստան-
ներն, ինչպէս նաև Ռուսաստանեայց և
Պարսկաստանի մէջ գտնուող Հայոց
ընդհանուր վանուց մասին վիճակագ-
րութեամբ մը ի մէջ այլոց Գանձակի
նահանգին Հաղարծին և Չորեքի վան-
քերը, Միսիթար-Գօշի թաղուած Նոր-
Գետիկ վանքը, Մակարայ հրաշակերտ
մենաստանը, Տաուլեղցոյն հիմնած Խո-
րանշատը, Խաչափուկի մենաստանը,
Դաւենոյ անապատը, Սաղմոսավանքը,
Նորավանքը, Հայոց Թառը, Կեչառու-
քը, Մաքրավանքը, Երնջակու Ս. Կա-
րապետը, Մայրագոմայ և Գօշայ վան-
քերը, բոլորովին անյիշատակ թողած է
շուրջ 1500 տարւոյ Գանձակու Ս. Թարգ-
մանչաց վանքը, զորմէ գրած էինք
Ծաղիկի վերջընթերթուոյն մէջ:

Սոյն երկու դասակարգի վերաբերող
բանասէր ընթերցողներն ալ գոհացնե-
լու մտօք, կը դառնամք մեր խորագրեալ
նիւթին, առանց հարկ տեսնելու ար-
տագրել աստ՝ Գանձակու Ս. Թարգ-
մանչաց մենաստանի պատմութեան նը-
կատմամբ, ինչ որ կը գտնուի Հ. Ղե-
ւոնդ Ալիշանի աշխարհագրութեան մէջ:

Մեք՝ Գանձակու Ս. Թարգմանչաց
մենաստանը տեսնելու բաղդը չեմք ու-
նեցած, սակայն Մշոյ համանուն վանքն
այցելած և գիշերած լինելով 1882ին,
յաւէտ ողբացեալ Գեր. Տ. Երեմիա
Սրբազան Տ. Սարգսեանցի, Գեր. Տ.
Յակոբոս վարդապետ Շահպաղեանի
և այլ հետաքրքիր ազգայնոց հետ,
մօտէն քիչ շատ ուսումնասիրե-
լու պատեհութիւնը չեմք կորսնցու-
ցած՝ հետազօտելով անդ մեր 5^{րդ} դա-
րու Հայ Թարգմանիչներէն Դաւիթ-Ան-
յաղթի, Մամբրէ-Վերծանողի և այլոց

գերեզմաններն ու յիշատակները, նոյն
վանուց մատենադարանին գլխաւոր
գարդը կազմող 8^{րդ} դարէն կտակեալ
Մագաղաթեայ ընտիր գաւազանագիր-
քը, Արուեստասիրաց լուսահոգի ընկե-
րութեան վարժարան բանալու պատ-
րուակին տակ՝ վանուց մէջ եղած շա-
հատակութիւններն, և այլն, և այլն:

Այս առթիւ պարտք կը համարիմ
յայտնել, որ արդէն մտադրած եմք՝
պարբերաբար Ծաղիկի մէջ հրատարա-
կել մեր ուղեւորութեան յուշիկներէն՝
մի քանի պատմական վանուց նկարա-
գիրներ և նկատողութիւններ, որոց մէջ
միապաղաղ պիտի երևին ոչ միայն Մը-
շոյ Ս. Կարապետի, Ս. Յովհաննու, Ս.
Առաքելոց վանքերն, այլ և Սեւան,
Էջմիածին, Շողակաթ, Հոփիսիմեանց
և Ս. Գայիանեանց վանքերն, Օշական,
Գեղարդ, Տէր-Յուսկան որդիին, Տիրա-
մայրն, Լիմ և Կտուց անապատները,
Վարագ, Կարմուռ, Սառնապատու Ս.
Լուսաւորիչ մենաստանները, Անգղայ
վանք, Չարահան Ս. Նշան, Սպիտակ,
Ս. Աստուածածին, Նարեկ, Աղթամար,
Բաղէշու, Կարնոյ, Բաբերդի և Տրա-
պիզունի վանուց նկարագիրներն:

Իսկ գալով մեր երկրորդ կարգի
հարցասիրաց, կը պատասխանեմք.

Պ. Հրանտ Ասատուրի՝ Գանձակեց-
ւոց Ս. Թարգմանչաց պատմական մե-
նաստանը չըլիշէն՝ անուշագրութեան
արդիւնք է անշուշտ, որոյ թերին կու-
գամք լրացնել աստ, օգտուելով մաս-
նաւոր թղթակցութիւններէ, Տփլիսու
Նոր-Դաւիթ մէջ երկցած յիշեալ վանուց
վերաբերեալ նիւթական շինութեանց
մանրամասն նկարագրէն, հրատարակ-
եալ ելմտական համառօտ հաշուետուու-
թենէն, և մասնաւորապէս նոյն վանուց
պատուարժան Խնամակալութեան կող-
մանէ 1890ին ի լոյս ընծայուած կոկիկ
տեղեկագրէն, յորմէ կ'իմացուի թէ՛ վա-
նական դպրոցի գոյութիւնը 1872էն
կ'սկսի, և փակուած եղած է, ինչպէս
նախընթացով յայտնեցինք, 1885ին:
Սակայն այժմեան գտնուած նախակըր-
թարանին մէջ կ'ընդունուին մերձաւոր
Հայ գիւղացիներէն այն ընծայացուք,
որք իրենց աղքատութեան պատճառաւ
կարող չեն թեմական Դպրանոց կամ Ս.
Էջմիածնայ Գէորգեան ձեմարանը մտնել:
Հիմա կ'աշխատուի եղեր վանական
երկդասեան ուսումնարան բանալ, չա-
փահասից համար՝ արուեստագիտական
մասնաճիւղով:

1872-1890, այսինքն յընթացս 18
ամաց, վանքի ընդհանուր արդեանց
գումարն է 9116 ռուբլի, որոյ մասնակ-
ցած են այլ և այլ քաղաքներէ եկեղե-
ցական և աշխարհական անձեր: Ի միջի
այլոց, պէտք է յիշել Տէր-Ներսէսեանց

նահապետական գերդաստանը, որ վե-
րոյիշեալ գումարին՝ 1281 ռուբլին նը-
ուիրած է: Նոյնպէս, Բագուի Մարդա-
սիրական ընկերութիւնը՝ 380 ռուբլի:
Պ. Ա. Ն. Թայիրեանց՝ 725 ռուբլի: Պ.
Ա. Ծատուրեանց՝ 250 ռուբլի, Հանգ.
Գէորգ Լալայեանց՝ 200 ռուբլի, Ինն
Թուրքեր 820 ռուբլի, Երեք Գաղղիացի
36 ռուբլի: Չորս Գերմանացի 16 ռուբ-
լի, Մի Ռուս 2 ռուբլի, Մի Յոյն 1
ռուբլի, Մի Լեհացի 45 ռուբլի, Երկու
Հրեայ 15 ռուբլի, Մի Բելգիացի 10
ռուբլի, եւ այլ ազգայինք՝ Աղէքսանդ-
րապօլէն, Գանձակ գաւառի գիւղացի-
ներէն, Խաչակապէն, Քարհատ գիւղէն
և Չովքառէն, Սուլուքէն, Կիրանցէն:
Իսկ մնացեալ գումարն՝ արդիւնք է
«Մածնարեղ» և «Կանգնեալ Խաչ»
երկու ուխտատեղիներէ, գանձանակա-
դրամէ, ամառուայ բնակարանի վարձ-
քէ, վարելահողերէ, արօտատեղիներէ,
պարտիզէն, և այլ պատահական եկա-
մուտներէ:

Իսկ ծախք եղած է տասն և ութ ա-
մաց շրջանին մէջ՝ 9880 ռուբլի, որոց
մէջ կը մտնեն Ս. Թարգմանչաց վանուց
այլ և այլ մասնակի նորոգութիւնք, նոր
շէնքերու կառուցմունք, վանուց բա-
րեգարդութիւնք, պտղատու ընտիր
ծառերով և բոյսերով շինուած լայնա-
տարած պարտէզն, զանազան ցանկա-
պատերու և պարիսպներու նորոգ շի-
նութիւնը, որոց մանրամասնութիւնք՝
ժամանակին տեղական լրագրաց միջո-
ցաւ հաղորդուած են ի գիտութիւն Հայ
հասարակութեան:

Ինչպէս կը տեսնուի սոյն հաշուէն,
երբ մուտքի և ելքի գումարներն իրա-
րու հետ բաղդատուին, 764 ռուբլիի
համեմատ բաց մը կամ պարտք մը գոյա-
ցուած լինելը կը հաստատուի, սակայն
բարեբաղդաբար այս պարտքն ալ այժմ
ջնջուած է, շնորհիւ Պ. Տէր-Ներսէս-
եանի աշաղկաւ և առատաձեռն գոր-
ծունէութեան:

Չմոռնանք գրելու թէ՛ Բագուցի
Մեծ. Պարոն Կարապետ Լալայեանց ևս
551 ռուբլի նուիրած է վանքին զան-
գակատան նորոգութեան համար:

Վանուց խնամակալութիւնը՝ որ ազ-
գային հոգեւոր իշխանութեան տնօրի-
նութեամբ յանձին Պ. Տէր-Ներսէսեանի
մի միայն կեդրոնացած է, իւր քսանամե-
այ զոհողութեանց փառապսակը պիտի
համարի երկու նորոգ ձեռնարկաց յա-
ջողութիւնն՝ եթէ իրականանայ մօտերս,
այն է, 1. Ծաղկաձորի 200 սափէն հե-
ռաւորութենէն երկաթեայ խողովակնե-
րով ջուր բերել մինչև «Հարանց դախտ»
անուանեալ վանքին կից տափարակը,
ու՛ր մեծ ջրամբար մը պիտի շինուի: 2.
Բանանց գիւղի Սայլուղին՝ մօտ 8—9

վերստ հեռաւորութեամբ մինչև վանքը երկարել, չըջակայ գիւղորէից ժողովրդեան ձեռնտուութեամբը:

Ահա՛ այն ատեն՝ Ս. Թարգմանչաց վանքն ալ իւր երկդասեան ուսումնարանով, արուեստանոցով, միաբանութեամբ ըստ ամենայնի և ընդ միշտ ապահովուած լինելով, բնաւ չպիտի կարօտ մնայ արտաքին նուէրներու, պատահական նպաստներու:

Ս. Թարգմանչաց խնամակալութիւնը՝ այնպիսի ուշիմ տնտեսութեամբ և չըջակայեաց գիտակցութեամբ վարած է 20 երկար տարիներէ ի վեր իւր ստանձնած պաշտօնը որ կրնայ իրաւամբ տխուր պատճառներով կոչուիլ, և կատարած է ամէն ինչ, զոր կրնար ընել բազմաթիւ անգամներէ բազկացեալ խնամակալու մարմին մը:

Պ. Տէր-Ներսէսեանց՝ վանուց մատակարարութիւնը օրինաւոր հաշուեմատեաններու և արձանագրութեանց մէջ առած է:

Ըստ հրատարակեալ համառօտ տեղեկագրոյն, Ս. Թարգմանչաց վանուց մատակարարութիւնը ունի հետեւեալ ժապաւինեալ մատեանները.

Ա. Ելեմտական Մայր-Տումար, որոյ մէջ արձանագրուած են բոլոր նուիրութեանները, կալուածական, ուստատեղեաց և գանձանակադրամոց գումարն ու նոցա գործադրութիւնը 1872—1887:

Բ. Սոյնպիսի Տումար՝ Ս. Էջմիածնէն զրկուած, յորում կանոնաւոր կերպով 1888էն շարունակուած է վանուց մուտքն և ծախքը:

Գ. Մատեան եկեղեցական զարդուց, անօթից և բոլոր սպասուց:

Սոյն տումարին մէջ առանձին ծանօթութեամբ մանրամասն արձանագրուած են բոլոր այն զարդերը, զգեստները, անօթները, Տէրունական, Սրբոց պատկերները և այլ բազմատեսակ ըսպանները, որ Սրբոց Թարգմանչաց վանքը՝ 1872էն մինչև ցայսօր շարունակաբար նուէր զրկած է հեռաւոր և մերձաւոր անչուք և բազմակարօտ գիւղերու եկեղեցեաց համար, և այսու մըլխիթարած է Հայ գիւղացի ողբաւ ժողովուրդը: Վասնզի, կրօնաւէր նահապետական Հայեր, լսելով Թարգմանչաց վանքի նախկին անչուք վիճակը, նուիրած են հետզհետէ այնքան անօթներ, զարդեր, պատկերներ, որ վանքը՝ իւր կարօտութիւնները լրացնելէն յետոյ, այլ ևս կարեւորութիւն չունենալով այդ տեսակ սպասուց, հետզհետէ կը հողայ գիւղական եկեղեցեաց բարեգործութեան և պայծառութեան պիտոյքը:

Դ. Մատեան տնտեսական և գլորցական կահ կարասեաց, պղնձեղինաց,

զարդուց, ևայլն, ևայլն, որք առաջուց մնացած կան եղեր. յետոյ ևս պատրաստուած են նուիրատուաց հաշուով և մասամբ նուիրած են բարեպաշտ և ուսումնասէր անձինք՝ իբրեւ դպրոցական պիտոյք:

Ե. Մատեան, որոյ մէջ յականէ յանունէ արձանագրուած են վանական մատենադարանին պատկանեալ բոլոր գրքերը, որոնցմէ մէկ քանին հեղինակներէն և մասնաւոր անձինքներէ ընծայուած են, իսկ մնացեալը՝ նուիրատուաց հաշուով գնուած:

Վանքի Մատենադարանը գամ քան զգամ կը ճոխանայ կրօնական, պատմական և համապատշաճ գրքերով՝ ի հոգեւոր մխիթարութիւն ուսումնասէր այցելուաց և ուսանողաց, այժմ հասակաւոր քահանայացուաց:

Զ. Արուեստաւորաց և մշակաց կիրառութեան համար տրամադրելի զանազան գործիքներու ժապաւինեալ ցուցակը: Սոյն գործիքներուն ամէն մէկուն գիմացը նշանակուած է գինը, Այս ցուցակին մէջ արձանագրուած է և ներթելիւնաց մնացեալը, մինչև 1890 Յունվար 1, Յոգնաթան խնամակալութիւնը այնչափ վստահ է իւր բարեխիղճ պաշտօնավարութեանը վրայ՝ որ կը համարձակի ոչ միայն հետաքրքիր նուիրատուաց նկատառութեանը առջև բաց ներկայացնել վանուց բոլոր գործերն ու հաշուեմատեանները, այլ և կը յաւելու:

«Հետաքրքրուող անձնաւորութիւնը — ունի որ և է նպաստ նուիրած այս գործերու համար կամ ոչ, այդ միւսնոյն է — երբ նա Հայ հասարակութեան անգամ է, ուրեմն և իրաւունք ունի հետամուտ լինելու վանքի ներքին և արտաքին գրութեանը»:

Ձեռնամուկ եղայ և յաջողուեց մըտադրութիւնս Արարչի ողորմութեամբ և առատաձեռն ազգայնոց աջակցութեամբ, թէ և (ցաւ է յիշելը) նոյն ազգայիններէջ ոմանք ոչ սակաւ սրտամաշ արգելքներ ստեղծեցին զիս վհատեցնելու: Այսօր Ս. Թարգմանչաց վանքը իւր վերանորոգութիւններով և շրջակայ վայելուչ շինութիւններով, բարեկարգեալ կալուածքով, ճոխ մատենադարանով, պարտիզով, ևայլն, ևայլն, այն սրտադրաւ կերպարանքն ունի, որ իւրաքանչիւր այցելուի հոգեպէս բերկրուելու և խաղաղութիւն վայելելու տուիթ է ընծայում, մինչև անգամ օտարազգի այցելուք իրենց համակրութեան ապացոյցը նուէրներով կը յայտնեն:

Իմ բարենպաստի՝ բայց չնչին գործունէութեան պատիւը Ս. Թարգմանչաց 1500 ամեայ վանքին վերաբերեալ ինձ չէ պատկանում, այլ անձնուէր դաստիարակներին, բարեխիղճ քարոզիչներին, որոց մէջ իբրեւ լուսապայծառ աստղ, նախամեծար և վեհագոյն տեղի ունենալով մեր վաղեմի Գարեգին Մուրադեանցն, մի առանձին զօրութեամբ գրաւած է բոլոր ողջամիտ Հայերի ուշքը:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի պէտս

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՓԱՐԱՆԱՑ

ԱՇԽԱՐՀԱՍՐԵԱՑ

Յ. Գ. ՓԱՆԱԿԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային կրթութեան գործին գուշնաքեայ ծառայութիւն մը մատուցանելու համար կը յօրինեմք նաև Աշխարհագրութեան ներկայ դասագիրքը:

Ինչպէս մեր այլ դասագրոց, նոյնպէս և ներկայ գործոյ մէջ ջանացածեմք ըստ կարելոյն հեռու մնալ ուսուցման աւանդական եղանակէն և արտաքին մեր ծրագրէն ամէն ինչ որ առողջուտ է, անբնական է, հակամանկաւարժական է, հետեւաբար վնասակար՝ մանկան մտաւոր կարողութեանց աստիճանական զարգացման: Այսպէս, Աշխարհագրութեան դասագիրք ըսելով՝ չեմք հասկցած յատուկ անունաց չոր ու ցամաք ցուցակագիրք մ'ուրիշ ուսանողն չ'զգար որ և է հրապոյր, հետեւաբար ոչինչ կ'ուսնի, ընդհակառակն արհամարհանօք կը լեցուի գէպ ի ուսումն: Ուսանողները չեմք զբաղեցնել, ինչպէս գծադրաբար կ'ընեն ուսուցիչք ոմանք, «աշխարհագրական հանելուկ» անունն ներքև անպետք առաջարկութիւններով, վասնզի համոզուած եմք թէ չ'ուսնի որ և է օգուտ, ո'չ նոր բան մը կ'ուսուցանեն մանկան, ո'չ անոր մտաւոր կարողութիւնները կը հրահանգեն, այլ կը ծառայեն միայն ժամավաճառ ընելու զնա, այս պատճառաւ իսկ դատապարտուած են եւրոպական արգի մանկավարժութեանն. ոչ մէկ նշանաւոր մանկավարժ այդ տեսակ հանելուկներ առաջարկած է՝ աշխարհագրութեան դասերն օգտակար գործելու համար, և ո'չ ալ արգի մանկավարժութեան սկզբանց համաձայն պատրաստուած նորագոյն դասագրոց մէջ տեսնուած է այդպիսի ինչ: Իրաւ է թէ տղայոց ընթերցանութեան յատկացեալ եւրոպական պարբերական հանդէսներու մէջ երեւցած են այդպիսի հանելուկներ, բայց հանդէսներու մէջ միայն և ո'չ երբեք դասագրքերու մէջ, և արդէն այդ հանելուկներու՝ այդ տեսակ հանդէսներու մէջ հրատարակութիւնն իսկ քննադատուած է: Մեր մեծ սխալն այն է որ կը կարծեմք թէ ինչ որ եւրոպայէն կուգայ մեզ, անպատճառ լաւ է եւ օգտակար: ո'չ, եւրոպական որքան դասագրքեր կան որ բացարձակապէս զէրօ կ'արժեն՝ արգի մանկա-

վարժութեան պահանջմանց հանդէպ: Մեզ համար կարեւորն է գիտակցութեամբ ընտրել ինչ որ լաւ է և օգտակար, և ի բաց մերժել ամէն ինչ որ անօգուտ է, մանաւանդ ամէն ինչ որ վնասակար է: Նոյնպէս աննպատակ, անօգուտ և մինչեւ իսկ վնասակար կը համարուի իբրեւ աշխարհագրութեան դաս նախակրթարանի աշակերտաց առջեւ դնել վիճակագրական ցուցակներ և պարտաւորել գնոսա սովորի վայնս, մանաւանդ երբ այդ ցուցակներ հազիւ ըմբռնելի են նոյն իսկ զարգացեալ անձանց:

Ներկայ դասագրքով ջանացած եմք ընդհակառակն պարզ և դիւրամբռնելի ոճով, դիւրութեամբ և բանաւոր եղանակաւ՝ աւանդել ինչ որ մեր Ազգային վարժարանաց աշակերտք կարող են օգտակարապէս ուսնիլ: Հեմք առաջարկած հանելուկներ, բայց իւրաքանչիւր դասէ վերջ՝ հարցումներ առաջարկելէ յետոյ, աւելցուցած եմք հրահանգներ որոցմով պէտք է զբաղին աշակերտք: այդ հրահանգներ պիտի ծառայեն աւելի հիմնական կերպով քանդակելու մանկան մտաց մէջ ինչ որ արդէն սովորեցաւ: Աւելորդ մանրամասնութիւնները զանց ըրած եմք, զի նոքա կ'արդիւն մանուկը կ'արեւորը, անհրաժեշտ ուսանելէ: Անտեղի և անօգուտ մանրամասնութիւններով գործը խճողելու համար՝ Օսմանեան պետութեան կարեւոր բաժինը չեմք յապաւած: Զոխացուցած եմք դասագիրքս բազմաթիւ պատկերներով, ո՛չ այն աննպատակ և այլանդակ պատկերներով սակայն որոնք ո՛չ միայն չեն ծառայեր դասին նիւթը աւելի դիւրին ըմբռնելու, այլ և կը խանգարեն մանկան ճաշակը, — զի դասագրքի մը պատկերք պէտք է այս երկու տեսակէտին միանգամայն ծառայեն, այսինքն աւելի դիւրին ըմբռնել տան դասին նիւթը և զարգացնեն տղոց ճաշակը: և այս կրնայ լինիլ՝ պատկերաց գիտակցաբար ընտրութեամբ և տպագրութեան մաքրութեամբ: Մանաւանդ, իբրեւ ամենակարեւոր ինչ, մասնաւոր տախտակի մը մէջ յստակօրէն պատկերացուցած եմք ցամաքաց և ջուրց զանազան ձևերն, գունաւոր գեղարվեստութիւններով աւելցուցնելով տախտակի վրայ ինչպէս կը գծուին անոնք աշխարհացոյց տախտակներու վրայ: Այսու, ցարք և ոչ մէկ դասագրքի մէջ տեսնուած մանկավարժական անհրաժեշտ պահանջում մը գոհացուցած եմք իրապէս, ուսացանելու համար աշակերտաց կարգաւ, հասկնալ և ըմբռնել աշխարհացոյցը, առանց այս կարեւոր նախապատրաստութեան՝ տարիներով աշխարհագրութիւն ուսանելէ յետոյ իսկ,

տղայք յաճախ անկարող կը գտնուին հասկնալու և ըմբռնելու աշխարհացոյցը որ կը մտայ իրենց համար ճշմարիտ հանելուկը:

Ի վերջոյ, չթողելու համար գործոյս մէջ վտարագրելի բան մը, գետեղած եմք նաեւ գունաւոր աշխարհացոյց տախտակներ, որոց անհրաժեշտ պէտքն ու կարեւորութիւնը կը խոստովանի ամէն ուսուցիչ, զի աշխարհագրութեան դասն առանց աշխարհացոյցի չ'ունի նշանակութիւն և չէ իսկ կարելի: Իսկ թուղթի, կազմի, պատկերաց գեղեցկութեան և տպագրութեան մաքրութեան մասին ոչինչ կ'ըսեմք, զի գործն ինքնին ցոյց կուտայ ինքզինք՝ իւր վրայ առաջին հայեացքը ձգողին: Այս ամէն առաւելութեանց միացնելով գնոյն տաժանութիւնը, ահա պատիւ կ'ունենամք պատուարժան ուսուցչաց ներկայացնել Աշխարհագրութեան ուսուցման համար ամենէն յարմար դասագիրքն ի պէտս Ազգային կրթութեան, յուսալով զբունել արժանաւոր քաջալերութիւն:

SUΘOԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Taoisme)

Տայօականութիւնը խիստ հին կրօնք մ'է որոյ հիմնադիրն է Կոնփիւկիոսի ժամանակակից իմաստասէր մը, զոր Լաոզս կ'անուանեն Չինաստանի մէջ և Ռոզի՝ Զարոնի մէջ:

Հին ժամանակները բազմաթիւ Տայօականք կային ծայրագոյն Արեւելից կղզեաց մէջ, բայց անոնց թիւը շատ նուազած է այժմ: Մեր երկրին մէջ (ի Գաղղիա) այս կրօնի պատկանող քահանայ չգտնուիր այլ ևս, և հիմնադրին տարեգարձին առթիւ միայն անոնց խօսքը կը լինի: Այս տօներուն՝ արարողութիւններ կը կատարեն, դառնալով Ռօզիի արձանին բոլորաթիւր, որում կ'ընծայեն ծաղիկներ, մասնաւոր բանաձևեր՝ զուրցնելով:

Տայօականք Պուտայականութեան ո՛չ բարեկամ են, ո՛չ թշնամի: Իսկ կողմանէ, յիշելով թշնամին են Կոնփիւկիոսի աղանդակցաց: Թշնամի են նաեւ Զարոնացւոց հին ազգային կրօնքը դաւանողաց:

Ի Գաղղիա հետաքրքրաշարժ պատկերներ կը գտնուին որոնք կը ներկայացնեն մեր արշիպեղագոսի մէջ տարածուած երեք մեծ կրօնից հիմնադիրներն, այսինքն՝ Պուտտա, Կոնփիւկիոս և Լաոզս: Պուտտա ներկայացուած է մէկ ձեռքի ցուցամատը յերկինս բարձրացուցած և միւս ձեռքի ցուցամատը յերկիր խոնարհեցուցած: այսու մեզ հասկցնել կ'ուզէ մեր պարտքերն այս աշխարհի մէջ և մեր ճակատագիրն յետ մահու: Պուտտաի քով ներկայացուած

է Կոնփիւկիոս՝ որոյ գլուխը գէպի գետին խոնարհած է, հասկցնելու համար թէ իւր վարդապետութիւնն այս աշխարհի բաներով միայն կը պարապի, և թէ իրեն համար կարեւորութիւն չ'ունի ինչ որ կրնայ գոյութիւն ունենալ այս աշխարհէ անդին: Իսկ Լաոզս, որ Պուտտաի միւս կողմը ներկայացուած է, կողերը կը գալարէ, ինչ որ կը նշանակէ թէ իւր մրցանակիցներն ստախօսներ են իրեն համար, որովհետեւ՝ իւր կարծեօք՝ չկայ իրական բան մը ո՛չ այս և ո՛չ ուրիշ ո և է աշխարհի մէջ: Լաոզս գերազանցապէս դրական իմաստասէրն է:

Իւր վարդապետութեան նպատակն է նախնական ժամանակաց վիճակին վերադարձնել զմարդ: Ռօզի չարիք կը համարի քաղաքակրթութիւնն, և նիւթական յառաջդիմութիւններն՝ ապականիչ բարոց: Օրինակի համար, չ'ուզեր որ ժողովուրդներն իրարու հետ յարաբերութիւն ունենան, ոչ իսկ երկու դիւրութեան բնակիչներն: Կ'արգիլէ ամէն տեսակ պերճանք և կ'ուզէ որ մարդիկ բարւոյ գաղափարն իսկ չ'ունենան, որովհետեւ, կ'ըսէ, բարւոյ գաղափարն չարի գաղափարին ծնունդ կուտայ: Կ'ատէ, կ'անարգէ գիտութիւնն զոր Պուտտայականութիւնն ընդհակառակն իւր անհրաժեշտ ինչ կը պատուիրէ՝ կատարելապէս առաքելի լինելու և վերականգնելու կամ Նիւթական հասնելու համար:

Ըստ Լաոզսի, գիտութիւնը անօգուտ մտատանջութեանց կը մատնէ ըզմեզ: Իմաստութիւնն, կ'ըսէ, կը կայանայ բացարձակապէս անտարբեր լինելու մէջ՝ աշխարհային իրաց նկատմամբ, լինին բարի կամ չար, չէ՛ փոխի: (L'alliance scientifique) Թ. Թ. Հ.

Ձ Գ Ա Յ Ո Ւ Մ Ն

Առաւօտեան երբ զարթնում ես քնից, Աչքս ախտայ դէպ՝ արեւելք է դառնում. եւ՝ բնագոյմամբ կարծես, կրճիս խորքից Գրիսսնէից սուրբ աղօթքներն են բոխում:

Երկնքի չափ պարզ ու յսակ իմ հոգին Ստանում է մի անսահման քարմուղիւն. Սիրոյ զգացմունք դէպ ի կարօս-բուռնիւն, Արժարձվում է իմ մեքի մէջ օրն ի բուն:

Որով իմ սիրսն ու հոգին բաց է միշտ. Յանկամ լինել ամենքին էլ օգնական... Որքան բարի՝ բառնալ երկրից ցաւ ու վիշտ:

Ու աշխարհից ջնջել իսպառ սուգ-կական: Եւ վաղորդեան սրբազնագոյն այդ ժամին Ծննդդիւրով աչքս յառած դէպ ի վեր, Աղաչում եմ բազմաշարժ Յիսուսին: Լցնել մեր սիրս զգացմունքով սրբազնութիւն: Ա Ր Շ Ա Կ

Ս. ԶԱՏԿԻ Բ. ԱՌՈՒՐ ՀԱՆԴԵՍԸ

Ի Ս. ՅԱԿՈՎԲ

Սոյն մեծավայելուչ հանդիսի նկարագիրն ընելէ յառաջ պատշաճ կը համարիմ գոնէ համառօտ ծանօթութիւն մի տալ Արգոյ մերազն հասարակութեան երուսաղէմ քաղաքի և Սրբազան վայրերու պատմական նշանակութեանց և մեր անդր ունեցած դրից նկատմամբ:

Եթէ աշխարհի այս ինչ կամ այն ինչ նշանաւոր քաղաքները մեծ հռչակ գըտած են իրենց բնական ու արուեստական ամէն ճոխութեամբ և առաւելութեամբ, երուսաղէմ քաղաքն ալ, թէպէտ զուրկ մէկէն ու միւսէն, բայց իւր յոյժ վաղեմի խորհրդաւոր անցքերով և մանաւանդ տիեզերաց Փրկչին շնորհաբեր գալստեամբ և անոր կատարած փրկագործ տնօրինութեանց Սրբազան վայրերով հաղարուոր տարիներէ յետէ աշխարհիս ամենէն պատմական, ամենէն նշանաւոր, ամենէն ցանկալի և ամենէն նուիրական քաղաքն եղած է, ամէն ազգաց, մանաւանդ քրիստոնէից համար: Երուսաղէմի կրօնական անհամեմատ առաւելութեանը համար երկար դարերէ ի վեր աշխարհի չորս կողմէն ամի ամի տենջանօք եկած են և կուգան ամէն քրիստոնէայ ազգերէ բազմաթիւ ժողովուրդք, իշխաններ և թագաւորներ՝ մարդացեալ Փրկչին այցելութիւն տալու, անոր սրբավայրեր աջօք տեսնելու, իրենց ուխտն և երկրպագութիւնը մատուցանելու, Ս. Տեղեաց շնորհն ընդունելու և իրենց հոգեւոր բազմանաց լիացումն տալու: Ս. Երուսաղէմ, իբրեւ աղբիւր և վառարան քրիստոնէութեան՝ համայն քրիստոնէից հոգեւոր արարողութեանց առաջին և մեծ հանգիստարանն է, այնպէս որ, չկայ տեղ մը կամ քաղաք մը՝ յորում այնքան եկեղեցական հանդէսներ լինին, ինչպէս Երուսաղէմի մէջ: Մեք Հայքս, և արգարե այս մասին բարեախտ Հայքս, Յոյն և Լատին գլխաւոր ազգաց հետ իբրեւ հաւասար բաժնեկից ազգ՝ բոլոր նշանաւոր Ս. տեղեաց վրայ բացի հանապազօրեայ սովորական սլաշտամունքէ ու պատարագներէ, տարւոյն սահմանեալ աւուրց մէջ համայն միաբանութեամբ շատ հանգիստաւոր արարողութիւններ կը կատարեմք, պատարագներ կը մատուցանեմք, թափօրներ կը դառնամք, և այլն, (մանաւանդ ի տաճարի Սրբոյ Յարութեան). այս եկեղեցական հանդէսք ապաքէն թէ՛ օտար ազգաց և թէ՛ մանաւանդ մեր բարեպաշտ ուխտաւոր ժողովուրդեան վերայ մեծ տալանորութիւն կը գործեն և որովք յայնժամ լաւ կ'ըմբռնեն մե-

րազնեայք թէ՛ ո՛րքան մեծ են մեր իրաւունքներ ի Ս. տեղիս, ո՛րչափ բարձր դիրքով կը ներկայանայ Հայոց ազգըն առաջի օտարաց, և այդ նուիրական և անփոխարինելի իրաւանց (նշանակեցէն իսկ չանցնելու պայմանաւ) պահպանման համար Սրբոյ Յարութեանց միաբանութիւնը ամէն տեսակէտով ի՛նչ մեծ անձնութիւն և զոհողութիւն յանձն առած է և կ'առնու միշտ: Այս մեր ըսած այնպիսի բացայայտ ճշմարտութիւն մի է, զոր ապացուցանելու բնաւ պէտք չկայ, վասնզի բաւական են և շատ իսկ տարուէ տարի Ս. քաղաքս եկող հազարաւոր ուխտաւորք, որ ամենայն ինչ կը տեսնեն աջօք և որք մշտաբարբառ վկայներ են մեր բոլոր ըսածին: Արդ՝ որովհետեւ մեր նպատակը չէր այս մասին երկարարան լինել ուստի բաւական համարելով այսքանը, կ'իջնեմք բուն մեր նկարագրին: Իրաւ է որ տարուան ընթացքին մէջ մի գլխի միւսայ եկած տօներու առթիւ թէ՛ ի Ս. Յարութեմ, մեր սեփական եկեղեցւոյն մէջ, թէ՛ ի Ս. տեղիս և թէ՛ մեր ուրիշ սեփական սրբավայրից⁽¹⁾ վերայ շատ փառաւոր ու չքեղ հանդէսներ կը կատարեմք, և մանաւանդ քանի մօտենամք Ս. Զատիկին, այնքան կը յաճախեն հանդէսք և աւելի չքեղ կերպարան կ'առնուն, սակայն Ս. Զատիկի Բ. օրը ի պատիւ և ի հոգեւոր ցնծութիւն մեր բարեպաշտ ուխտաւոր ժողովուրդեան, իբրեւ վերջին և արձակման հանդէս մի ալ կը կատարեմք, որ արդարեւ ամենէն մեծաշուք ու փառաւորն է, և մանաւանդ ամենէն դիւթիւն ու սրտաշարժը: Ահա այս տարուան կատարուածի նկարագիրն:

Ապրիլ 6ի գեղեցիկ աւուր առաւօտեան Զրդ ժամուն էր, Ս. Յարութեմ աւագ զանգալը իւր թանձր ղօղանջիւնով կը հրաւիրէր ուխտաւոր ժողովուրդն յեկեղեցի՝ վերջին մեծավայելուչ և փառահեղ հանդիսի մը կատարման: Ս. եկեղեցին, այն պատկառելի հինաւոր սրբութիւնը, իւր ամենաճոխ զարդարանաց մէջ հարկաւոր կանթեղներու և մոմերու լուսով լուսաւորուած՝ այնպիսի ակնապարար և հիառքանչ տեսարան մը կ'ընծայէր, որ անտարակոյս կը զեղանիւր տեսողաց սիրտն հոգեւոր հըրճուանաց քաղցր զգացմամբ:

Ահա՛, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, համայն եպիսկոպոսներ և վարդապետք ամենքն ալ ծաղկեայ գոյնըգոյն փիլոններ առած, կ'իջնեն եկեղեցի:

(1) Զոր օրինակ ի Ս. Փրկիչ, ի տունն կայիափայ, ուր մեր եկեղեցւոյն մէջ է Փրկչին մերոյ Բ. բանտը: Եւ ի Ս. Հըրեշտակապետ, ի տունն Աննայ, ուր է նաև Բրիստոսի Ա. բանտը, և այլն...

ցի, և Նորին Ամեն. Հօր օրհնութեամբ կ'սկսի ժամերգութիւնն որ ատեն արդէն ժողովուրդեան հոժ բազմութիւնը լցած էր եկեղեցին. աւուր ժամերգութիւնը հանդարտ ու վայելուչ կերպիւ կատարուելէ զինի, յետ սովորական «Ճաշու» ին կ'սկսի Ս. պատարագն խիստ հանգիստաւոր. Սրբազան խորհրդոյն սեղանի շուրջը կ'սպասաւորէին երեք վարդապետք, վեց սարկաւագունք, նոյնպէս վարը երկու վարդապետք՝ իբրեւ դըպրապետ 70ի չափ մեծ ու փոքր դպրաց մէջ կանգնած՝ երկձայն եղանակաւ ներդաշնակ կը յօրինէին Ս. Պատարագի երգեցողութիւնը. զանց չ'ընեմք յիշել թէ՛ բոլոր դպիրք և սպասաւորք հագած էին ծանրագին և գեղեցկակերտ ընտիր շապիկներ. և երկու դպրապետք ու երեք բուրվառ ընդունել իրենց գլուխը կը կրէին մարգարտայեռ և աղամանդազարդ մեծագին սաղավարտներ:

Ճաշու դրքի ընթերցմանէն անմիջապէս յետոյ Սրբազան Պատրիարքն սկսաւ քարոզի, եւ թէպէտ կարի յուզեալ⁽¹⁾, այլ իւր ծանօթ եռանդեամբ և բազմաց լսելի խորխտագին ձայնով նախ աւուր խորհրդոյն վերայ խօսեցաւ, ընդհանրապէս նիւթ առնելով Յովսէփ Արեմաթացւոյն հաւատքն ու գործքը և յետոյ չիջելով խօսքը ուխտաւորաց, սրտառուչ կերպիւ յառաջ բերաւ թէ՛ որքան դժուար է և որտառոյնոր Ս. տեղեաց ընդելանալ և անոնց սէրն ու շնորհ վայելելէ զինի անոնցմէ բաժնուիլ: Այս միջոցին Նորին Սրբազնութեան սիրտը փլծկեալ էր և շատերն արդէն յարտասուս շարժեալ. այլ սակայն հայրաբար կը խորխուսէր նաև հարկի պահանջման սիրով հնազանդիլ և ամէն մէկուն վերայ պարտ կը դնէր չ'մոռանալ Երուսաղէմ իւր բոլոր յիշատակօք, Դաւթի սա յարմարագոյն վերալուծեամբ՝ որ կ'ըսէ. «Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ և այլն. ապա ջերմագին բարեմաղթութեամբ վերջացուց իւր երկբարբառ՝ Հա-

(1) Կ'արժէ ըսել թէ՛ Ս. Պատրիարք Հօր մերոյ բարձր արժանեաց և կարողութեանց գլխաւորներէն մին է իւր նշանաւոր բեմբասացութիւնը. ուխտաւորաց ատեն հարկի պահանջմամբ մեր Սրբազան Հայրը շատ ստէպ կը քարոզէ առանց կորսնցնելու իւր կորովն ու եռանդը, և կը խօսի միշտ ընդարձակ, նիւթալից և մեկնական ոճով: Դեռ կը յիշեմք նոր տարւոյս ծննդեան տօնին ի Ս. Բեթղէմի մէջ ամէն ազգէ խմբուած յոգնախառն խօսած այն եռալեզուեան տոյսինքն Հայերէն, տաճկերէն և աւելի Արաբերէն եղակի քարոզը՝ որով սքանչելի կերպով բացատրելով Բրիստոսի մարդեղութեան խորհուրդը, զամենսին յապուչ կը թեց:

յերէն և թրքերէն՝ քարոզը որ ճիշդ մէկ ժամ տեւեց, Գարոզէն վերջը կ'արժէ յիշել հանդիսաւոր վերաբերումը եկեղեցւոյ հիւսիսային կողմը Ս. Գըլ-խաղրի մատրան կից պատրաստուած շարժական սեղանէն առնելով սրբութիւնը՝ ամբողջանայ տակ խորհրդաւոր և քաղցրաձայն երգերով եկեղեցւոյ չորս կողմէն շրջեցնելով բերին ի Ս. Սեղան. յետ ողջունին բոլոր եպիսկոպոստներ և վարդապետք կ'երթային խորհրդատուն զգեստաւորելու՝ ի պատրաստութիւն յետ պատարագին կատարելի մեծահանդէս թափօրին, որ օրուան հանդիսին ամենէն նշանաւոր մասն էր։ Սրբազան պատարագիչը վերջին աւետարանը կ'ընթեռնոյր և ահա՛ աջակողմեան դասի բերանէն սկսեալ եկան կանգնեցան շար ի շար⁽¹⁾ մետոսան եպիսկոպոստներ զգեստաւորեալ՝ խաչ և գաւազան ի ձեռին և պնակիք ի կուրծս, ասոնց առջևէն մետոսան զոյգ վարդապետք դարձեալ զգեստաւորեալ քահանայական զգեստուք, իւրաքանչիւրի ձեռքը լինելով արծաթեղէն և ապակեղէն, և այլն, ընտիր անթիւերու մէջ զետեղուած Առաքելոց և Սրբոց մատենքներ, և այլն. սոցա ալ առաջէն նախ մեր ուխտաւոր քահանայք և ապա, ըստ վաղեմի սովորութեան, Ղըպտոց և Հապէշայ վարդապետք բաւական թուով՝ ամենքն ալ միայն շուրջաւով, յետ որոց դպիրք, աշակերտք, քաղաքացի մանկտիք, դրօշակիրք, մոմակալք, և այլք մոմեր ի ձեռին. սոյն կարգաւ կազմեալ թափօրականք եկեղեցւոյ չորս կողմէն շուրջանակի անցնելով, ծայրերն մէկ մէկու հասած էր։ Աւարտեցաւ պատարագը, և եկեղեցւոյ բոլոր վանդակները կը հնչէին ի նշան նոր հանդիսին սկզբնաւորութեան. թափօրը սկսաւ իւր շրջանը որ ատեն կ'երգուէր «Նշանաւ ամենայաղթ» սրբատառն և գեղեցիկ շարականը ներդաշնակ եղանակաւ։ Սրբազան Պատրիարք Հայրն իբրև թափօրապետ փառաւոր ամբողջանայ մը տակ մտած՝ շրջապատեալ զգեստակալներէ ու մոմակալներէ, կենաց փայտի մասունքն պարունակող մեծ և ծանրագին խաչն ի ձեռին՝ բոլոր անցած տեղերէն խաչակնքելով կ'օրհնէր խմբուած հոգնախումբն բազմութիւնը՝ որ յուզեալ հոգեով ակնապիշ կը դիտէր այս հիասքանչ հանդէսը։

(1) Եօթը միայն եպիսկոպոս և կը ձերուանի վարդապետք եպիսկոպոսական զգեստուք. ինչպէս ասոնց, նոյնպէս 14 զոյգ վարդապետաց զգեստները այնքան գեղեցիկակերտ և ծանրագին էին, որ ուրիշ տեղեր հազիւ մէկ երկու ձեռք կը գտնուէին այդպէս հանդիսաւոր աւուրց համար...

սոյն եղանակաւ թափօրականք երիցս դառնալով եկեղեցւոյ շուրջը, չորրորդին տաճարի աւագ դրան սկզբութեամբ եկան. բոլոր դպիրք մնացին ատենը, և վարդապետք անցնելով ատենէն՝ բովանդակ դասին մէջ մէկ ուղղութեան վերայ ի դուռն իջեալ նստան, իսկ Սրբազան Պատրիարքով՝ երկոտասան եպիսկոպոստներ ելնելով ի բեմ՝ բոլորակի կանգնեցան կարգաւ, ուր երկու Սրբազաններ դէմառ դէմ երգեցին քաղցրաձայն ուխտաւորաց ողջերթի «ճանապարհ»ը, յետ որոյ Սրբազան Պատրիարքը կենաց փայտով «պահպանիչ» և «փարատեալ» մը ըսելով և վերջին ջերմաջերմ բարեմաշխութեամբ մը փակեց մեծավայելուչ հանդէսը՝ որ ատեն ժամը 3 1/2 էր. ուխտաւորք հոգեւոր խորին տպաւորութեան տակ ցրուեցան և շատերն իսկ նոյն ժամայն լալազին աչօք իրենց վերջին ուխտը մատուցանելով Ս. Գլխաղրի, անցան յուղի իւրեանց հայրենիքը դառնալու։

Սոյն նկարագրական յօդուածը գըրեցինք այն միակ նպատակաւ որ կրօնասէր ընթերցողաց սրտին մէջ ևս արծարծի Երուսաղէմի սէրը, և արժանանան գալ ի տեսիլ շնորհապարգէ Սրբազան տեղեաց և հոգեպարար Ս. Հանդիսից որ արդարեւ հոգեկան մեծ մխիթարութիւն է և կեանքի մէջ անմոռանալի քաղցր յիշատակ։

Երուսաղէմ
13 Ապրիլ 92

ԹՈՔԱՏԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ռուսական «Նետէլիա» շաբաթաթերթի 1891 տարւոյ 46^{րդ} թուոյն մէջ տպուած էր հետեւեալ հետաքրքիր թըղթակցութիւնը. — Անցեալ տարւոյ նոյեմբեր ամսի մէջ բժշկապետ Կոխի գիւտի յարուցած ընդհանուր իրարանցման տպաւորութեան տակ՝ զիս դարմանող բժիշկները յայտնեցին որ այլ ևս պէտք չկայ ինձմէ ծածկելու իմ թոքախտը, քանի որ այժմ այս հիւանդութիւնը կը բժշկուի վեց շաբաթուան մէջ։ Գտնուեցան մինչեւ անգամ այնպիսի անձինք որոնք կը շնորհաւորէին զիս որ իմ տըկարութիւնը ո'չ թէ մի երկարատեւ հիւանդութիւն է, այլ թոքախտ, որ այժմ ոչինչ բան է։ Չեմ կարող չխոստովանիլ, որ ես ինքս նոյնպէս թէ՛ կը շնորհաւորէի թոքախտս և թէ՛ չափէ դուրս ուրախ էի, որ չունէի կրծկային բորբոքումն, ինչպէս կնքած էին բժիշկներն իմ աներկբայելի թոքախտը։ Եւ ի՞նչպէս կարելի էր չուրախանալ, մինչդեռ մէկ կողմանէ կար Գերմանացւոց յայտնի հոգալիս իբրեւ մանրախոյզ

մարդիկ և մի և նոյն ժամանակ առհասարակ անընդունակ ամբողջ աշխարհի աչքի առաջ լուսն ուղտ դարձնելու, իսկ միւս կողմանէ Կոխի լուրջ գիտութիւնն ու համաշխարհային հոգալիս, այն երաշխաւորութեամբք որ իբր թէ զինուորական մեծ դատաւորի աչքի առաջ այս ինչ մարդու շնչափողէն հանուած է ուռոյցքի ամբողջ մի կտոր, թէ միւսի անբժշկելի լուպուսն անյայտացաւ մի քանի աւուրց մէջ, և այլն, և այլն։

Թոքախտս ինձ յայտնուելէ եօթ օր յետոյ, առաւօտեան ժամը վեցին (ըստ Եւրոպացւոց) արդէն Պէրլինի մայրիկ վրայ կանգնած էի իմ ճանապարհորդական թեթեւ կապոցի մօտ, զոր շալակովը վար դրած էր ինձ համար մի որ և է հիւրանոցի մէջ տպաւորանարան գտնելու համար։ Սրբէն երեք հիւրանոց մտած էինք երկաթուղւոյ կայարանին մօտ, բայց բոլորն ալ խժկուած էին հիւանդաց և բժշկաց խուռն բազմութեամբ, որոնք հաւաքուած էին, լսելով Պէրլինէն տարածուած լուրը բժշկապետ Կոխի մասին։ Եղանակը յուսահատական էր. ցո՛ւրտ, ձիւն, քամի... Բայց մեկու երկու զիս չէր վախցնէր։ Ընդհակառակն՝ այս խուռն բազմութեամբ լի Պէրլինն աւելի ու աւելի կ'ամրապնդէր իմ հաւատը Կոխի-նայի հրաշագործ ուժի վերաբերմամբ և կ'ուրախացնէր զիս, աննկարագրելի կերպով կ'ուրախացնէր, մոռնալով այն որ ես ընկած էի մի օտար քաղաքի փողոցի մէջ, սպասելով մի անկուն գտնել որ և է յարկի տակ։ Իմ շուրջն անդադար կը խռնուէին նորեկներ, շնչասպառ, կապոցներ ի ձեռին և չէին դադարեր զիս ուրախացնելէ, ըսելով թէ մի փոքր համբերութիւն ալ որ ունենամ, մինչեւ վեց շաբաթ բոլորովին առողջ կը լինիմ։ Վերջապէս անկունէն դուրս կը թռչի իմ կապոցի շալակովը, սաստկութեամբ կը յարձակի կապոցիս վրայ ու կ'սկսի վազել արագութեամբ, ըստպառնալով ինձ, իբր թէ «Տէրմինուս» հիւրանոցի մէջ գտտարկուած միակ սենեակը շուտով կը բռնուի։ Վազեցինք և խելացնորներու պէս ներս թըռանք այդ սենեակը և դուռը փակեցինք որ ուրիշները չմտնեն։

Իբրեւ օրական վարձ սենեակի համար կ'ստանային 12 մարք, վառելիքի համար 2 մարք, լուսաւորութեան՝ 2 մարք։ Չնայելով որ վառելիքի համար 2 մարք կ'ստանային, սենեկին մէջ ցըրտութեան աստիճաններն այնքան բարձր էին, որ մուշտակ հանելու հնարաւորութիւն չկար, ո'չ միայն հիւանդի, այլ և առողջ ուսմ մարդու համար, որ անսովոր է Գերմանացւոց նման ձմեռը բաց պատուհաններով ննջելու։ Ահամայ

գլխիս մէջ ծագեցաւ այն գաղափարը թէ ես այստեղ կը կորչիմ, և ծանր նախազգացումը մի տեսակ տենդային դրութեան հետ միասին՝ ամբողջ մարմնոյս տիրապետեց: Կ'ուզէի փախչիլ... բայց ո՛ւր: Ո՞ւր կարելի է գտնել տաք ապաստանարան, մինչդեռ ամենաճոխ կարգաւորուած «Տերմինոս» հիւրանոցի մէջ այնքան սաստիկ ցուրտ էր, ինչպէս էսկիմացուց խրճիթներու մէջ: Կ'իջնեմ ընդհանուր սեղանատունը, ուր սաստիկ վառելէն կարմրած էր չուգունէ վառարանը, Դուրսը դեռ մութ է, բայց սեղանատունն արդէն լի է բազմութեամբ: Ամէն կողմ կը լսուի խաղաղ, միակերպ անգլիական խօսակցութիւն: Այստեղ էին Ամերիկայի բոլոր անկիւններու ներկայացուցիչները: Սոքա բոլորը եկած էին Կոխի մօտ, Կոխի համար և Կոխինայի ետեւէն: Ահա՛ մի ամբողջ ընտանիք ագահութեամբ կ'ուտէ տապական և երբեմն երբեմն կը խօսակցի սեպհական շոգենաւի մասին, որ զիրենք բերած էր Ձիւլին: Ընտանիքի գլխաւորը և սեպհական շոգենաւի տէրը, ինչպէս կ'երեւէր, բոխի էր: Եւ ահա՛ ի՞նչպէս կարելի էր չվերանալ հոգւով և հազար անգամ չկրկնել ինքն իրեն, որ ամբողջ մարդկութիւնը չէր կարող սխալած, խեղացնորած լինել Գերմանացուց հինաւուրց հաստատակամութեան պատճառաւ: Ձիւլի բժշկականութեան ներկայացուցիչ, որ և սեպհական շոգենաւի տիրոջ, գիտողութիւնը իմ ընդարմացեալ մարմնոյ մէջ յուսոյ աղբիւր բղխեցուց: Անհամբերութեամբ յաճախ պատուհանէն կը նայէի, սպասելով լիակատար լուսանալուն, որպէս զի, առանց մի րոպէ կորսնցնելու, ընդունիմ Կոխի գլխիման և այսպիսով անկասկած առողջանալու առաջին քայլն անեմ:

Ժամութե՛ք, ժամանակը կրիայի քայլերով առաջ կը գնայ: Կը ցաւիմ թէ ի՞նչու համար Մոսկուայի մէջ ամբողջ օր մը կորսնցուցի, որով քսան չորս ժամ ուշացուցի բժշկուիլ: Փողոցի մէջ ձեան բիւրեղները ոլորապտոյտ շրջաններով վար կ'իջնեն, կը դիպուին: Մայթերու վրայ աւելի և աւելի կը խռնուի ժողովուրդը: Տղայք, աղջկանք, կանայք և խոհարարուհիք՝ բոլորն ամառուան հագուստներով՝ կը վիտան փողոցներու մէջ: Փողոցի միւս կողմը կը բարձրանայ մի ահագին շինութիւն՝ բազմութիւն բաց պատուհաններով, որոցմէ մէկի առաջ կանգնած է գերմանացին յետ ծալուած թեւերով, երեսսրբիչն ի ձեռին: Նա նոր էր լուացուեր և այժմ երեսը կը սրբէ, աներկիւզ կերպով կանգնելով 7 աստիճան սառնամանիքի մէջ, բաց պատուհանի ա-

ռաջ: Միւս պատուհաններու մէջ կը տեսնուին սպասուհիներու սենեակներ մաքրելու խողանակները: Շատ պարզ է, որ Պէրլինն արդէն արթնցել է և այժմ կարելի է գնալ բժիշկ որոնելու:

Կը գնամ: Գրպանիս մէջ յանձնարարական նամակներ կան Ռուսաց դեսպանատան և Պէրլինի հին բնակիչ ոմն Ռուս սրտակից մարդու հասցէին: Դեսպանատան մէջ չեմ կարող միտքս յայտնել ու աժառն և տաք սենեակներով բռնակարան հարցնել. այս իսկ պատճառով կը գերադասեմ բարի Ա. Ա. Ն. և կը գնամ անոր քով:

Հայրենակցիս ուրախ ընդունելութիւնը, ռուսական ձեռով տաքցած սենեակները, ռուսական ոճով սրտակցութիւնը—այս բոլորը մեծ ոգևորութիւն կուտային ինձ: Բայց զարմանալի է Ա. Ա. ի հետ խօսակցութիւնը. կարծես թէ բան մը կը խլի ինձմէ. նորա ինձ քաջալերելու ամենաանկեղծ ջանքն աններդաշնակ կերպով կ'աղդէր իմ այն հաւատին, թէ Կոխի իմֆան հրաշագործ ոյժ է: Այս «լիմֆան», «ինեկցիան», «բէակցիան» և Կոխի բժշկութեան բոլոր տիտղոսները՝ իմ կամքի հակառակ իմ մէջ կ'սկսին յարուցանել կասկածանք: Բայց միւս կողմէն ականջներուս կը հնչէ «Կոխ», գերմանական կանոնաւորութիւն, բազմութեամբ լի Պէրլին, ամերիկացիք, աւստրալիացիք, Ձիւլի բժիշկը սեփական շոգենաւով, և այլն, և այլն: Զէ՞ որ բոլորը ցնորքներ չէին, այլ իրականութիւն: Այստեղ կարծես թէ աշխարհ կը հաւատացնէ մարդկութեան մի ընդհանրական պատժէ ազատուելու հնարքի խկութիւնը:

Սակայն իմ խօսակցութիւնն այն մարդու հետ, որ գիտէր ինչ որ Պէրլինի մէջ յառաջ կուգայ, միանգամայն մութ շերտերով ծածկեց Կոխի պայծառ փայլումը, ի նկատ առնելով այն բազմութիւն շահագործ հրեայ բժիշկները, որոնք իրենք զիրենք կ'անուանէին Կոխի օգնականներ: Ա. Ա. ի շնորհիւ ես ազատեցայ մի քանի Լէվի, Կորնէտ և այլ շահագէտ բժշկաց լարած ցանցերէն. սոքա՛ կը հաւատացնէին իւրաքանչիւրին թէ՛ բաւական է 1500 մարդ և վեց չաբաթ ժամանակ, կատարեալ առողջացած վերադառնալու համար: Ա. Ա. ի իբրեւ ճշմարիտ մարդ՝ չբաւականացաւ հաղորդել ինձ բարեխիղճ բժշկի հասցէն, այլ անձամբ տարաւ զիս պրոֆէսոր Գերհարդի մօտ և յանձնեց այս գիտնականի առանձին ուշադրութեան:

— Որովհետեւ ձեր բժիշկները չեն ծածկեր ձեզմէ որ դուք թոքախտ ունիք, և ես աւելորդ կը համարիմ ծածկել: Բայց, շարունակեց նա, եթէ դուք

եկեր էք բժշկուելու Կոխի իմֆայով և կ'ուզէք որ ես բժշկեմ ձեզ, դուք պէտք է գիտնաք որ լիմֆայի ներդրածութիւնը դեռ ոչ ոքի յայտնի չէ, որ դուք կը մոնէք փորձառոյններու շարքը և ես կ'սկսիմ միայն այն ժամանակ բժշկել ձեզ՝ երբ յայտնեք թէ չպիտի լինիք դժգոհ, եթէ այս բժշկութիւնը ոչ մի արդիւնք ցոյց չտայ:

Եթէ այս բանը հիմա լինէր, ես կը հարցնէի Գերմանացուց թէ ինչո՞ւ համար ինքն և միւս իւր նման պրոֆէսորները չաշխատեցան վերջ տալ թերութեան բարձրացուցած ազադականութիւն սոյնպիսի նախազգուշութիւններով, այլ ընդհակառակն այս բանը կ'ըսեն այն ժամանակ, երբ արդէն ամբողջ աշխարհ իրենց գլուխն է հաւաքուեր: Բայց այն ժամանակ գիտնականի այս անսպասելի նախազգուշութիւնը ոչ միայն փէճա չը կոտրեց, այլ ընդհակառակը քաջալերեց զիս: «Համեստութեամբ վարուեցաւ Գերմանացին», մտածեցի ինքս և վճռեցի բժշկուիլ:

Միւս օրը մօտս եկաւ Գերհարդի օգնական Պ. Նորդէնը և առաջին անգամ սրսկեց 1 1/2 միլլիգրամ իմֆա: Այժմ այս բոլորն իւր հետաքրքրականութիւնը կորսնցուցած է, բայց այն ժամանակ իմ բժշկութեան ընթացքին սրտատրոփ կը հետեւէին մօտ տասնի չափ Ռուս բժիշկներ, որոնք եկեր էին Պէրլին կոխիմայի ետեւէն: Իսկ կինս համարեա ամէն օր ժամէ ի ժամ կը գրէր իմ մէջ կատարուող բարեխառնութեան փոփոխութիւնները, զարկերակս, և այլն: Աստիճանաբար աւելացնելով իմֆայի քանակը և բազմատանջ տենդ պատճառելով ինձ, մինչեւ չորս չաբաթ չափը հասուցին 60 միլլիգրամի և կը հաւատացնէին որ եթէ 100 ի հասնի, թոքախտի հետքն անգամ չը նկատուիր: Այսքան ժամանակամիջոցի մէջ մէջքս ա՛յն աստիճան ծակծկեցին որ, երբեմն երբ կը լուսանար, զարհուրանքով կը մտածէի թէ՛ հա՞րկ է կրկին որոնել մէջքի վրայ մի կէտ, որուն ծակոցն այնքան չարատանջ չլինի: Իւրաքանչիւր նոր սրսկումի հետ միասին տենդ ու դողի տեւողութիւնն կ'աւելանար: 60 միլլիգրամ սրսկելէ յետոյ՝ երկու օր շարունակ ջերմութեան մէջ էի, իսկ երրորդ օրը կոկորդս այնպէս բորբոքուած էր որ ես ո՛չ միայն չէի կարողանար թոքս կուլ տալ, այլ և կը շնչէի մեծ դժուարութեամբ: Իմ բժիշկը (Նորդէնն ինքն եւս հիւանդացաւ և յանձնեց զիս Գերհարդի միւս օգնական Հերդելին) կը վստահացնէր որ այս բոլորը այն իսկական յետընթացութիւնն է, ուրկէ յետոյ պէտք է հեռանայ ուռուցքը և ես կ'առողջանամ: Անդադար

մանրացոյցով կը հետազօտէին իմ խու-
լը և Հերգէլն ամէն անգամ կը բացա-
գանչէր որ ես չափազանց մեծ քանա-
կութեամբ բացիկներ ունիմ, կը նշա-
նակէ ուրեմն որ այդ բացիկները չեն
կարող մնալ իմ մէջ և դուրս կուգան
խուլի հետ միասին: Սնկիկներ էին որ
դուրս կուգային անդադար, բայց և
այնպէս որ աւուր ես աւելի կը վատա-
նայի: Վերջին երկու շաբաթները ես
կը կերակրուէի միայն ոստրէներով, ո-
րոնք՝ առանց մի ստանձին ցաւ պատ-
ճառելու՝ ներս սահելով կուլ կը գնա-
յին: Մնացած բազմատեսակ կերակու-
ներն ինձ անմատչելի էին, մինչև ան-
անգամ կաթը ցաւ կը պատճառէր՝ դըր-
գուելով կոկորդս:

Վերին աստիճանի տանջուած և ամ-
բողջովին յոյս կտրած պարոն օգնա-
կաններէն, ես կրկին անգամ գնացի
պրոֆէսէօրի մօտ: Յունվարի 12-ն էր.
նայելով կոկորդս, ի մեծ վարմանս իմ,
նա յայտնեց որ մի կողմը թողնելով
կոխիքը, ես, ո՛րքան կարելի է շու-
տով, պիտի գնամ Մենտոնա կամ առ-
հասարակ դէպ ի հեռաւոր հարաւ:
Կոխիքայի մասին իմ հարցմանցս նա
երկդիմի պատասխաններ տուաւ: Ինչ-
պէս օրինակ՝ իմ այս հարցման—հարկ
է արդեօք շարունակել կոխիքը, երբ
կոկորդիս ուռոյցը կը քաշուի—նա պա-
տասխանեց՝ Ո՛րքան աւելի հեռու կե-
նաք կոխիքայէն, այնքան աւելի լաւ
կը լինի ձեզ համար: Իմ հարցին—մի
որ և է օգուտ տուա՞ն ինձ կոխիքը—
նա ասաց որ տուաւ հարկաւ, բայց մի
և նոյն ժամանակ յարեց նաև որ իրենք
ամենքն էլ այդ բժշկութեան մասին
ինձմէ աւելի բան չեն հասկնար այժմ,
այլ մինչև անգամ ինձմէ քիչ գիտեն,
քանի որ իրենք զուրիշները կը դիտէին,
իսկ ես ինքս փորձեցի սեպհական կա-
շիկս վրայ:

Այսպիսով կտրեցաւ իմ դէպ ի
կոխը տածած յոյսս: Գնալ Մենտոնա,
դառնալ կրկին հին սովորութեանց,
բժշկուիլ օգով, հոգ ունենալ հիւան-
դոտ գոյութեան երկարատեւութեան
մասին՝ այլոց և իրեն ներդրուիւն պատ-
ճառելով հանդերձ, այս բոլորը շատ
կարելի է լաւ է, բայց ոչ ինձ՝ ծառա-
յութեամբ և ուճկով ապրողիս համար:
Եթէ միջոցներս ներէին և կարելի լինէր
մի ձմեռ Մենտոնա անցունել, այն ժա-
մանակ մի և նոյն միջոցները չէին նե-
րեր անցունել նաև ուրիշ ձմեռներ:
Ստիպուած ես վերստին մեր երկիրը,
հիւսիսային կլիմայի մէջ ապրիլ ու ձը-
մեռել, և այս չափը բաւական է որ
կրկին անգամ բոլորը յօդս ցնդին:

Մեռնիլ, բայց և այնպէս տանը մէջ
մեռնիլ և ոչ թէ տառապիլ, այլ մեռ-

նիլ շուտով, — վճռեցի ես և այսպիսի
վճռով դուրս եկայ գիտնական գերմա-
նացւոյ առանձնասենեակէն: Այսպէս
ալ կ'ընէի, եթէ միայնակ լինէի Պէրլի-
նի մէջ, բայց ինձ հետ էր նաեւ կինս,
իսկ այսպիսի դիպուածներու մէջ՝ կա-
նայք սեպհական տրամաբանութիւն ու-
նին: Ես նիհարեցի էի և կը նմանէի ա-
ւելի կմախքի, քան կենդանի մարդու:
Ոյժերս մատնեցին զիս և ես բոլորովին
անտարբեր դարձայ դէպ ի այն բոլորը,
ինչ որ ինձ կը պատահէր: Իմ այս տե-
սակ դրութեան շնորհիւ՝ կնոջս յաջողեց
նստեցնել ինձ վագոն և տանիլ ո՛չ թէ
դէպ ի հիւսիս, դէպ ի տուն, ինչպէս
ես էի վճռել, այլ դէպ ի հարաւ, Մեն-
տոնա: Չեմ սկսիր նկարագրել բոլոր
ա՛յն ծանր ու յուսահատական անյար-
մարութիւնները, որոնք կարծես թէ
դիտմամբ և ի վիտս հիւանդաց դասու-
ւորուած էին գերմանական, զույգե-
րական և իտալական երկաթուղիներու
մէջ, Համառօտ կ'ըսեմ որ շնորհիւ չը
վաւած վագոններու և կրակարաններու,
նա մանաւանդ շնորհիւ «Լիւցերնայի»
լաւագոյն հիւրանոցի մէջ գիշերելուս,
ուր՝ քսան աստիճան ցուրտին հակա-
ռակ՝ չգտնուեցաւ մի հատ սենեակ վա-
ռարանով, ինձ տարին Մենտոնա աւելի
վատ դրութեան մէջ:

Ինձ տարին կ'ըսեմ, որովհետեւ չը-
նորհիւ Կոխի եղանակով բժշկութեան՝
ես այնպիսի դրութեան մէջ էի, որ ինքս
ո՛չ մի կերպով չէի կարող գնալ: Գիշեր-
ները հազն այնպէս կը խեղդէր զիս որ
ես ուժասպառ կը լինէի: Ես մի միայն
կակուղ կերակուր կը կարողանայի կուլ
տալ, այն ալ մեծ դժուարութեամբ և կո-
կորդիս ցաւ պատճառելով: Իսկ քնանալ
կը կարողանայի ափիոնի օգնութեամբ,
զորս հետս առած էի Ռուսիայէն: Երեք
շաբաթ անցնելէ յետոյ՝ Մենտոնայի մէջ
ես այնքան վատ էի, որ մէկ գիշերուան
մէջ կ'առնէի երեքմէ 3, երեքմէ 4 ան-
գամ ափիոն, և միայն այս ճանապար-
հով կը կարողանայի փոքր ինչ հանգըս-
տանալ: Յիսուն մարդու մէջ, որոնք
մեր հիւրանոցը (Օտէյլ-Մայտա) կ'ապ-
րէին, միայն մէկն ինձմէ աւելի վատ
էր, նոյնպէս Ռուս, Տուրայի հարուստ
գործարանատէր, որ արդէն մի քանի
ձմեռ անցուցած էր ի Մենտոնա: Այս
մարդուն նայելով՝ ես մի տեսակ չարա-
խնդութեամբ կը յանդիմանէի կինս,
Մենտոնա գալու համար վատնուած ա-
նօգուտ ժամանակի և փողի համար:
Նորա ուժասպառ գծագրութիւնը իբրեւ
արդիւնք Մենտոնայի մէջ անցուցած մի
մի քանի ձմեռն, աչքերս խաւերով կը
ծածկէր: Ես չէի կարողանար նայիլ, ա-
ռանց յիշելու Պէրլինի մէջ իմ ըրած
խեղացի վճիռը, այսինքն գնալ տուն


առանց աւելորդ ծախքերու և ճիգ թա-
փելու: Մեր հիւրանոցի մէջ կային նաև
այնպիսիք որոնք ինձ պէս եկեր ին
Պէրլինն, Կոխի օգնականաց ձեռքով
նոյն բժշկութեան ենթարկուելէ յետոյ:
Այս հիւստիափուած դժբախտները տես-
նելով իմ մէջ երկու զգացմունք կը վառ-
ուէր. երեքմէ ցաւել ամբողջ մարդկու-
թեան վրայ, որ շատ բան կորսնցնելով՝
կորսնցուցած էր նաև դէպ ի Կոխն ու-
նեցած յոյսն ու հաւատը, երեքմէ ալ
մաղձային չարութեամբ կը լեցուէի դէպ
ի բոլոր բժիշկները: Բայց և այնպէս բը-
ժիշկները Մենտոնայի մէջ կը շարունա-
կէին այցելել հիւանդաց առաւօտէն
մինչև երեկոյ, և ուշագրութիւն չդար-
ձնելով մեզ — կենդանի օրինակներս,
կը շարունակէին հիւանդները շահագոր-
ծել Կոխի իմնացով, առնելով 20 ֆը-
րանք իւրաքանչիւր անգամ սրսկելու
ժամանակ, 10 ֆրանք՝ սրսկելէ յետոյ
կատարուող բէակցիւան դիտելու համար:
Կը դիտէին, կ'ստանային դիտելու վար-
ձը, բայց իրենք բացարձակապէս ոչինչ
չէին հասկնար այս բժշկութեանէն: Իմ
զգուանքը դէպ ի այս էսկուլպաներն
այն աստիճան մեծ էր, որ չէի ուզեր
զանոնք տեսնել: Ստիպել ինձ անոնց
ձեռքով բժշկուելու՝ չկարողացան ո՛չ
խնդիրները և ո՛չ իսկ կնոջս յուսահա-
տութիւնն:

Եւ ահա՛ այժմ, նկարագրած դրու-
թեանէս 8 ամիս յետոյ, ես այնպէս ա-
ռողջացայ, որ այս ժամանակամիջոցի
մէջ համարեա ամբողջ ամիս ու կէս ան-
ցուցի վագոններու մէջ, որովհետեւ ան-
դադար պտտեցայ Զուիցերիա, Ֆրանսա
և Պէլճիզա, ինձ հետաքրքրող հիմնար-
կութիւնները դիտելով, իսկ գիշերները
չըջելով: Ռուսիոյ մէջ հարիւրաւոր մը-
ղոններ չըջեցայ, փորձեցի կառքով դը-
նալ մօտ 160 մղոն նախնական պոստի
ճանապարհով, անվտանգ անցուցի խո-
նառ ու ցուրտ աշունք և այժմ կ'ըրօս-
նում 17 աստիճան սառնամանիքի մէջ,
զգալով զիս կատարեալ առողջ: Դէպքն
ինձ փրկեց. իմ այս հրաշալի առողջա-
նալու դէպքի մասին ես բարոյական
պարտականութիւն կը համարիմ յայտ-
նել յօգուտ այն հիւանդաց որոնք չըն-
չառութեան գործարաններու հիւան-
դութիւն ունին:

ՆՈՐ-ՂԱՐ

(Մնացեալը յաջորդ քուով)

Մարմնոյ մորքը կակղելու համար.—
Մորթը կակղուղ պահելու համար, անօ-
թի մը մէջ լեցուցէք 5 տրամ ծծումբ
(fuchs) և 10 տրամ անջրախառն
կաթ, խառնեցէք լաւ մը և թողէք որ
ժամ մը մնայ. յետոյ, առանց մրուրին
հպելու, հեղուկը քսելու է մարմնոյն:



ՅՈՐԴԱՆԻԱՆ ՍՄԲԱՏ ՇԱՀԱՋԻԶԵԱՆԻ

Մոսկուայէն հետեւեալ հեռագիրն ուղղուած է Թիֆլիսի լրագրաց, բանաստեղծ Սմբատ Շահաջիզեանցի գրական ու մանկավարժական գործունէութեան երեսնամեայ յորեկանին տօնուիլը ծանուցանող.

«ՄՈՍԿՈՒԱ, 10 Ապրիլի. — Շահաջիզի յորեկանը տօնվեց հանգիստաւոր կերպով, ստացված են բազմաթիւ ուղերձներ և հեռագիրներ. հանդէսը վերջացաւ էրմիտաժում ճաշկերոյթով: Կազմվեց 6000 ռուբլու ֆօնդ:»

Յարգելի բանաստեղծն ևս իւր կողմանէ հետեւեալ հեռագիրն ուղղած է Թիֆլիս.

«ՄՈՍԿՈՒԱ, 10 Ապրիլի. — Ապրիլի 9ին, իմ գրական և մանկավարժական գործունէութեան երեսուն տարվայ լրանալուն օրը՝ հաստատութիւններից, ընկերութիւններից, մամուլի օրգաններից և մասնաւոր անձներից շատերը բարեհաճեցան պատուել ինձ զգացված շնորհաւորութիւններով: Թանգ է ինձ այն, որ իմ համեստ անուանս հետ միացրել են և մի բարի նախաձեռնութիւն՝ բարեգործական նպատակով: Միջոց չունենալով իւրաքանչիւրին առանձնապէս արտայայտել իմ երախտագիտական ըզգացումները, խնդրում եմ ձեզ յայտնել այն բոլոր անձանց, որոնք այդ օրը ինձ յիշեցին, իմ սրտագին ողջոյնս և շնորհակալութիւնս: Այդ անմոռանալի օրը կը լինի իմ ամբողջ կեանքիս ամենագեղեցիկ յիշատակը:»

Ահաւասիկ այս յօդակնին առթիւ Թիֆլիսի մէջ տեղի ունեցած երեկոյթի ու հանգիստի մասին կովկասեան լրագրաց հաղորդած տեղեկութիւնները.

«Ապրիլի 9ին, Թիֆլիսի Հայոց հասարակութիւնը, «Հրատարակչական ընկերութեան» նախաձեռնութեամբ, պատուեց բանաստեղծ Սմբատ Շահաջիզի երեսնամեայ գործունէութեան տարեգարծը՝ մի երաժշտական-գրական երեկոյթով, որը տեղի ունեցաւ Ժողովարանի դահլիճում: Կարգացին և երգեցին գլխաւորապէս Պ. Շահաջիզի գործերէն: Սկզբում Պ. Ալեքսանդր Բալանթար կարգաց բանաստեղծի համառօտ կենսագրութիւնը: Ապա Օր. Գենջեան երգեց Նուազ և մի երկու ուրիշ երգ: Տիկին Արտիստեան կարգաց մի ոտանաւոր, որից յետոյ ջութակահար Պ. Քալանթարեան և վիօլօնչէիստ Պ. Բուշաճեցին մի քանի կտորներ: Թէև երեկոյթի մասին շատ ուշ էր յայտարարված և անձրեւային եղանակն էլ շատ աննպաստ էր, բայց և այնպէս բաւականաչափ հասարակութիւն էր հաւաքուած՝ ի պատիւ բանաստեղծի:

Կօնցերտից յետոյ տեղի ունեցան եւրօպական պարեր: Մեր ժողովրդական Աշըղ Ջիւանին նուագեց «Եալլի» և մի խումբ երիտասարդներ «Եալլի» պարեցին: Սեղանը պատրաստուած էր ընթրիք մօտ 60 հոգու համար, որի ժամանակ ի միջի այլոց խմեցին Պ. Շահաջիզի կենացը:»

ԿՈՎԿԱՍԵՆ ԼՈՒՐԵՐ

ՎՈՐՈՆԷՅԻՑ. — Հաւաստի աղբիւրներից լուծւոք ենք, որ Նոր Նախիջևանի թեմական դպրանոցի ուսուցչական խումբը մտադիր է ի մօտոյ հիմնել հայկական մի շարժաթերթ:

Աւելորդ եմ համարում այստեղ մէջ բերել այսպիսի մի տեղական թերթի կարեւորութիւնը, որովհետեւ այդ ձեռնարկութեան մտադրողներն արդէն իրենք էլ շատ լաւ հասկացած են այդ բանը:

Յուսալի է, որ Նախիջևանցիները մանաւանդ սիրով պիտի ողջունեն այդպիսի մի տեղական թերթի գոյութիւնը՝ որի ապացոյցներից մինը կարող է լինել նաև այն, որ ամէն դրացի լրագիրների մէջ գրեթէ պակաս չեն թղթակցութիւններ Նախիջևանից:

Ցանկալի է այդ մտադրութեան բարեջաշող իրագործումը:

ԲԱԹՈՒՄԻՑ. — Բաթումում եղանակը դեռ չէ ուղղուել. ցուրտ է և կարծես դրա հետևանքն է, որ ժողովուրդը մըրսում է՝ եկեղեցի չէ յաճախում. հայ թատերասէրները մըսել են՝ ներկայացման վրայ չեն մտածում, հոգաբարձուները մըսել են՝ անցեալ թատերական հաշիւը մինչև օրս չեն հրատարակել, բարեգործական ընկերութեան անդամները մըսեցին՝ մարտի 22ին նշանակած ընդհ. ժողովին չեկան, եկեղեցւոյ երեցօրեքը մըսում է՝ ժամ չէ գալիս, ձկնորսները մըսում են՝ ձուկը սակաւ է Բաթումում, քահանան մըսում է՝ մեռնողի կտակը ապօրինի է կատարում, եկեղեցու շինութեան հոգաբարձուները մըսում են՝ չեն մտածում թէ ի՞նչ են անելու, հայ տիկիները մըսում են՝ որովհետեւ յօգուտ օր. ուսումնարանի ժողովարարութեան մատենը անգործադրելի են թողել իմօնագ խմբիները մըսում են՝ որով նորա գործարանատէրերը վնասի տակ են ընկնելու, երկիւղի մէջ են...:

ԲԱԹՈՒՄԻՑ. — Մարտի 23ին, առաւօտեան վախճանում է Մշեցի Մըխիթար Կիրակոսեան. սա հասարակ կրտակով թողնում է իւր տունն և կարողութիւնը մինչև 9000 ռուբլի արժողութեամբ մեր երկսեռ դպրոցներին: Ունի

կին և բաժանուած եղբայրներ. ինքն անգաւակ է. Կտակ գրողը լինում է Թիւրքիացի մի ծեր քահանայ, որ երկրի օրէնքներին տեղեակ չլինելով, չէ յայտնում իրեն հիւանդի մօտ ուղարկող Տէր Աբգարին կամ թէ չէ հրաւիրում նոտար: Երեցօրս Պ. Ստեփանեանցը մինչև օրս էլ չգիտէ թէ ի՞նչ է պատահել: Տէր Աբգարը ձեռք ու ոտք է ընկել Պ. Ս. Կարինեանցի հետ մի ճար գտնել ու հաստատել տալ այդ կտակը: Մարտի 24ին Միխիթար Կիրակոսեանի թաղման հանգէսին Տէր Աբգարը մի դամբանական կարգաց, որու մէջ յիշեց թէ հանգուցեալն իւր կարողութիւնը կտակել է տեղիս Հայոց դպրոցներին. հանգուցեալի եղբայրները համաձայն չեն, առարկելով, որ իբր թէ այդ կտակն ապօրինի է, և այլն. Տէր Աբգարը պատասխանում է՝ «Լաւ է, մի վրդովուիք, ուսումնարանը ձեզանից ոյժով չէ խլելու»: ՆՈՐ-ՆԱՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Սոխի ազդեցութիւնք. — Տօթէօր Լապարթ կ'ըսէ թէ եթէ հում սոխն քիչ քանակութեամբ ուտուի, ախորժակը կը գրգռէ, իսկ շատը՝ հում կամ եփուած, կ'աւելցնէ մէզն և կը պատճառէ զգայում ու որովայնային գարշահոտութիւն: Ի հնումն, ի պաշտպանութիւն իրենց անձին ընդդէմ ժանտախտի, ամէն առաւօտ սոխ մը կ'ուտէին. նաև իբր դարման, մեղր ու սոխի հիւթ կը գործածէին թուճաւոր կենդանեաց պատճառած վէրքերուն դէմ: Ա. Փարէյի ժամանակ (ԺԶ. դար) սոխը կը գործածուէր մաղերու ամման համար. Բատէտը կասեցրելու ժամանակ (ԺԷ. դար), ինչպէս այժմ, կ'ըսուի թէ սոխը օգտակար է ուռեցքներու և վէրքերու: Տօթ. Բաշէն կ'ըսէ թէ կարմիր գինին՝ որոյ մէջ կտրուած սոխ մը երկու օր կը մնայ, փորորդները կը ջնջէ. հում սոխով ջրգողութեան և շաքարախտի բժշկութիւնք տեսնուած են. սոխի ապուրը արթնալներու համար շատ յարմար դարման մ'է, և վերջապէս, սոխը այլ և այլ կերպով գործածուելով, փողացաւին, ականջի ցաւին և հարբուխի դէմ օգտակար եղած է:

Ուղեւորութիւնք Շալանձէրի. — Շալանձէր նաև մ'է որ գիտական գննութիւններ կը կատարէ Ուլիանոսներու վրայ. ասոր շնորհիւ հաստատուեցաւ թէ Ուլիանոսներու վրայ հեռու ցամաքէն, բարեխառնութեան օրական փոփոխութիւնը շատ աննշան է, և հովն սաստկագոյն կը լինի. հովն ամենաուժգին է ի հարա յախնովկիանոս. ժամը 23 մղոն կամ մի երկվայրկեանի մէջ 10 մ. 3 ընթանալով. հովն ամենատարբեր է ի հիւսիսակողմն խաղաղականի, մի երկվայրկեանի մէջ 6 մ. 7: Ցամաքի և Ուլիանոսի հովերուն սաստկութեան միջին տարբերութիւնն է մի ժամուան մէջ 4-5 մղոն:

Այնքապ

Թ. ԳԻՒՐԵԼԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ Երեսփ. Ժողովն անցեալ շաբթու 152ի դէմ 175 ձայնով մերժեց կանանց ընտրողական իրաւունք տալու ծրագիրը: Անցեալները ծանուցինք արդէն Պ. Կլաութոնի այդ ծրագիրը պարսաւող գիրք մը հրատարակելը:

— Զանգիպարի մէջ, ինչպէս ծանուցինք, բողոքական բնիկները կաթոլիկներուն վրայ յարձակած էին յուկանտա. այժմ այդ կռիւնքը բոլորովին զսպուած է, սակայն հիմակ ալ կաթոլիկ բնիկները կը պատրաստուին եղեր բողոքականաց վրայ յարձակիլ:

— Ֆրանսացիք ոմանք Ռուսիոյ կայսեր մատուցեր են աղամանդազարդ և մեծաւ մասամբ արծաթակուռ գեղեցիկ շինուածք մ'իւր արծաթեայ ամուսնութեանն առթիւ: Այդ ոսկերչական հրաշակերտը որ Նիքոլա կայսրէն սկսեալ Ռուսիոյ վեհապետաց ազգարանական մէկ ծառը կը ներկայացընէ, 50000 ֆր. արժած է:

— Անգլիոյ Երեսփ. Ժողովն իւր ապրիլ 30ի նստին մէջ 54ի դէմ 74 ձայնով մերժեց է Իրլանտիոյ, Սկոտլանտի և Կալիֆոռնիոյ մէջ յատուկ խորհրդարաններ հաստատելու առաջարկը:

— Աֆղանստանի մէջ էմիրին զօրաց և բնիկ ցեղերուն միջև կռիւներ տեղի կ'ունենան, որոց մէջ մեծաւ մասամբ առաջինք կը յաղթուին:

— Բրուսիոյ համար յատուկ նախարարապետութիւն մը կազմելու համար պէտք եղած վարկն ընդունուեր է Երեսփ. Ժողովոյ ելեմտից յանձնաժողովոյ կողմէն:

— Ի Հապէստասան, Հարրարի մէջ հնտախտ ծագեր է:

— Պարսկաստանի նախորդ դեսպանն ի Լոնտոն՝ Մեքլոն խան, որ Եւրոպայի մէջ իւր կառավարութեան համար պարգեւաւոր փոխառութիւն մը կնքելու լիազօր իշխանութիւն ստացած էր, ինչ ինչ զեղծումներ գործած լինելով, այդ իշխանութիւնն իրմէ առնուեր և իրեն տրուած փոխանորդագիրն առ ոչինչ գրուեր է:

— Ֆիլաքսիոյ կեդրոնական թատրոնն անցեալ շաբթու ներկայացման մը պահուն այրեր է: Վեց անձինք մեռեր և 70 անձինք վիրաւորուեր են: Վընասք մէկ միլիոն տոլար կը հաշուուին:

— Ռոչիլսեան դրամատան Ֆրանք-Փորթի մասնաձեւին փախստական գանձապահ՝ Եէկէրի հետքը գտնողին 3000 մարք խոստացուած է նոյն դրամատան կողմանէ: Ոստիկանութիւնը խիստ քննութիւններ կը կատարէ: Անցեալ շաբթու Եէկէրի հոմանուհւոյն տունը խուզարկեր, բայց բան մը չեն գտեր:

— Մայիս 1ի տօնը յուսացուածէն շատ աւելի խաղաղիկ անցաւ: Արդէն ապրիլ 30 շաբթ. օրուէն մեծ քաղաքաց օստիկանութիւնք կանխազգուշական միջոցներ ձեռք առած էին բարեկարգութիւնը չխռովելու համար: այսպէս Վիէնայի, Պէրլինի, Հռոմի, Բարլիի, Պարիզի և Պրուսիի մէջ բազմաթիւ կասկածելի անձինք ձերբակալուեցան: Կիրակի օր եւրոպական բոլոր ճարտարարուեստական քաղաքաց մէջ գումարումներ, հանդիսաւոր պըտոյտներ եղան և ճառեր արտասանուեցան, առանց վայրկեան մը իսկ բարեկարգութիւնը խանգարուելու:

— Իսպիոյ նախարարը համաձայնած են իրենց մէջ պատերազմական գործոց նախարարութեան ելմուտային վրայ որ պիտի լինի 255 միլիոն ֆրանք:

— Բրուսիոյ և Ռէուս-Կրայցի իշխանութեան միջև դիւանագիտական յարաբերութիւնը խզուած էին 1866էն ի վեր: Կէլֆեան հարստութեանց վրայ դրուած արգելքին բարձման վրայ յարաբերութիւնք սկսեր են և իշխանն ալ ի մօտոյ Պէրլին պիտի այցելէ:

— Ֆրանսայի մէջ գիւղային և քաղաքային շրջանակաց տեղական ընտրութեանց մէջ 20642 հանրապետականք և 15492 պահպանողականք ընտրուեր են:

— Աւստրիոյ կայսրուհին անցեալ շաբթու Յունաստանի արքունեաց այցելութիւն մը տալէ յետոյ, ֆորֆու իւր նորակառոյց դղեակը դնաց և ապա դէպ ի վիճինս ճամբայ ելաւ, ուր հասաւ չորեքշաբթի:

— Գերմանիոյ կառավարութիւնն իւր արհիւկեան գաղթականութեանց մեծ կարեւորութիւն կուտայ. գաղթային վարչութեան պետ Պ. Գայզեր երկուշաբթի օր ճամբայ ելեր է Պէրլինէն՝ քննական պտոյտ մը կատարելու համար գերմանական արեւելեան Ափրիկէի մէջ:

— Պան քը Երմէնքեթէ քը լ'էն-Տիւսթի դրամատունը՝ որոյ տնօրէնք փախած, ձերբակալուած և անձնաւորական եղած էին, պաշտօնապէս սնանկ հրատարակուեր է:

— Պապը իւր եպիսկոպոսական յորհրդանիւն առթիւ սկսեր է նուէրներ ընդունիլ և արդէն իսկ 30 սնտուկ զանազան ընծայներ ընդունած է:

— Սթէնլի՝ մեծանուն երկրախոյզն՝ իւր միութենական կուսակցութեան կողմնակից ինքզինքն ընտրելի պիտի առաջարկէ յառաջիկայ խորհրդարանական ընտրութեանց մէջ:

— Լիոնի կայարանին մէջ (Ֆրանսա) Կալիֆոռնի իշխանին վերաբերող և թանկագին նիւթեր պարունակող սնտուկ մը գողցուեր է:

— Ֆրանսայի կառավարութիւնը իւր թռչակէն զրկեր է Նանսիի եպիսկոպոսը որ եկեղեցեաց մէջ հրապարակախօսութիւնն արգելող օրէնքին դէմ տետրակ մը հրատարակած էր:

— Գերմանիոյ կայսրն անցեալ շաբթու Հելիկոլանտ կղզին այցելեց:

— Անգլիոյ թագուհին Տարմուտթ մեկնելով Անգլիա վերադարձաւ:

— Վիւրթեմպերկի Գանշթո քաղաքին մէջ Սթրաուս և Ընկ. գրչի գործարանն այրելով բազմաթիւ գործաւորներ ալ վիրաւորուած են: Եղած վնասը դեռ յայտնի չէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբախտքիւն. — Միրիլիվա Գեազիմ փաշա Կ. Պոլսոյ առժամեայ կեդրոնական հրամանատար. — Մուսա պէյ Չարչամալի (Տրապիզոն), — Գեամիլ պէյ Պաֆրայի, և Խայրի էֆ. Փաթսայի գայմագամ տնտանեցան:

Ասիւնան. — Անտառաց և Հանքաց տնօրէնի օգնական և Հանքաց մասնագիտաց ժողովոյ նախագահ՝ Զիեա պէյի Իւլայի Ա. և Ներքին գործոց նախարարութեան դիւանատան դեր-տնօրէն՝ Րիֆաթ պէյի Սանիյէ Միլիթմայիզ աստիճանները տրուեցան:

Պաշտօնաւան. — Ելմուական նախարարութեան ընդհ. հաշուակալ Մէճ-տէտտին էֆ. ի Մէճիտիյէ Ա. — Կիւլրոսի Օսմանէրէն թարգմանութեանց դիւանի տնօրէն Արիսողում էֆ. Իւթիւճեանի Օսմանիյէ Դ. — Բարբրդի միւլթի Ալի էֆ. ի Մէճիտիյէ Դ. և ճարտարապետ Վարդան էֆ. ի Մէճիտիյէ Ե. պատուանշանները ընտրուեցան:

— Հերէֆէի մետաքսեղինաց գործարանին կից 15 գործասեղանով արեւելեան կապերտի նոր գործարան մ'ալ պիտի հաստատուի ի մօտոյ:

— Պարսկերէն Ալքէր լրագիրը հընգետասանօրեայ դադարման դատապարտուած է:

— Կարնոյ բանտը ծակելով երկու հոգի փախեր, սակայն անմիջապէս ձերբակալուեր են:

— Կարնոյ անգղիական հիւպատոսարանին թարգմանին տունը մտնող գողերը ձերբակալուեր են:

— Պոլսոյ փառափանց շինութիւնն սկսուած է Թօփհանէէն:

— Յաթա-Երուսաղէմ երկաթուղոյ շինութիւնը վերսկսած են և 4-5 ամսէն կ'աւարտին:

— Սելանիկի մէջ հինգ հրեայ տուներ սնանկութիւն հրատարակուեր են՝ 6000 ոսկի վնաս պատճառելով հրապարակին:

— Լուսանկարներէ և այլ պատկերներէ դրողմի թեթեւ տուրք մ'առնելու նոր ծրագիր մը մատուցուած է :

— Ոգիի գործարան մը հիմնելու համար Պէյրուքտէրէի բարձունքը՝ արտօնութիւն տրուած է Աստիկ էֆէնտի Հարէնցի :

— Այսբնի կառավարիչ Բաղդապ փաշա արձակուրդով մայրաքաղաքս ժամանեց :

— Համագայից Անկէլանցին ծախուց համար Վեհ. Սուլթանը 1,000,000 զրուշ շնորհեր է, Մեծ-Եպարքոսը՝ 10 000, Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտին՝ 7,500, Սպարապետը, Արդարութեան, Ծովային, Արտաքին, Ներքին, Կրթական, Ելմտական գործոց և Էվգաֆի նախարարները, Շէյխ-Իւլ-Ֆաշա, Թընդանթարանի Վերատեսուչը, Առևտրական և Հանրագումար շինութեանց նախարարն ալ 5,000ական զրուշ նուիրած են :

— Հանգստեան բուսի յատկացուեցաւ 133 պաշտօնէից և վախճանած պաշտօնէից ընտանեաց :

— Ասիական գաւառաց քննիչ մասնախմբին նախագահ Միրիլիվա Զիեա փաշայի Եւգոնիոյ տունն այրելով, գոյքերն ու տեղեկագրերն ևս հրոյ ճարակ եղեր են :

— Գաղափիոյ հունձքն այս տարի շատ առատ պիտի լինի եղեր :

— Մաչքայի զինարանին ետեւ գըտնուող պարտիզին մէջ մարդարան մը և զօրանոց մը պիտի կառուցուի :

— Պայպիսի բանտէն փախչող Մուսթարքգուլը մարդասպանը դարձեալ ձերբակալուեր է :

— Անճնասպանութիւն փորձեր են Օսման անուն անձ մը Պօլսոյ Աճը Մուսուլք փողոցին մէջ իւր արձակած կնոջ ուրիշի մը հետ ամուսնանալուն համար, և Պ. Էմմանուէլ Բէլէկրինի՝ տէր Մալքա նաւաձիգ շոգենաւուն :

— Մալսուսէի վարչութեան քարտուղար Յաիք պէյ իւր կինը դաշոյնով վիրաւորեր և ձերբակալուեր է :

— Ասանայի մէջ սառնոցի գործարան հիմնելու համար արտօնութիւն խնդրած է Տըթէօր Բաթըրս :

— Եգիպտոսի պապական Հայերը որք կառավարութենէն 1000 ոսկւոյ գնած էին իրենց եկեղեցւոյն գետինը, 250 եգիպտ. ոսկւոյ գեղջ մ'ընդուներ են մընացեալ 400 ոսկւոյ պարտքէն :

— Տրապիզոնի նոր կուսակալը անցեալ շաբաթ օր մայրաքաղաքէս մեկնելով երեքշաբթի իւր պաշտօնատեղին ժամաներ է :

— Բաղէի կուսակալը քննական պըտոյտի ելնելով, գործոց վարչութիւնը տէֆթէրտարին յանձներ է :

— Սելանիկի Տէմիր-Բաբու գիւղին շրջակայքը 11 աւաղակաց խումբ մը երևան ելեր է որ կը հալածուի ոստիկան-զինուորաց կողմանէ :

— Անսառաց եւ հանգաց վարժարանի բարձրագոյն կարգի ուսանողը Գարասի գացին գործնական փորձերու համար :

— Մալսուսէի «Սէօլիսի» շոգենաւը որ Սամսոնի և Սինոպի միջև մըշուշին պատճառաւ խրած էր, ազատուեցաւ :

— Գոլուքիւն մը կատարուեցաւ անցեալ ուրբաթ գիշեր Պօլսոյ Ուզուն-Չարչույի Բիլիտ խանին մէջ : Գողերը որք Յոյներ են, կողոպտուած սենեկին վրայ գտնուած սենեկին քովի սենեակը վարձեր և նոյն սենեկին պատը և քովի սենեկին տախտակամածը ծակելով, վարի սենեկէն 600 ոսկի գողցեր են :

— Սպանութիւն մը կատարուեցաւ երկուշաբթի Սիւլտար : 20 ամեայ Լեւոն դանակով մը զարկաւ 23 տարեկան Պարտիզակցի Օննիկը որ իրմէն աւելի աժան եազմա կը ներկէ եղեր : Լեւոն հինգշաբթի ձերբակալուեցաւ ի Ղալաթիա վատահամբաւ տան մը մէջ, ուր ապաստանարան փնտռած էր :

— Քեաղքսիանի փամիլտանոցներէն միոյն մէջ վառօղի պայթում մը տեղի ունեցաւ երկուշաբթի և երեք գործաւորներ վիրաւորուեցան :

— Տէր. Վուլփոլիչի սպանչաց դատը երկուշաբթի սկսաւ տեսնուիլ Եղեռնադատ ատենին առջեւ : Մէրճան, որուն փաստաբանն է Սարաճ Թորոս էֆ., իբր կանխամտածութեամբ մարդասպան և իրիսթօ, որուն փաստաբանն է Սուպհի պէյ, իբր մարդասպանի օժանդակ, իսկ Նաում և Նիքօլի որք ի բացակայութեան պիտի դատուին, իբր առանց բռնադատելու ոճիրն հրամայող ամբաստանուած են : Մէրճան և իրիսթօ իրենց վերադարձած ոճիրները կ'ուրանան : Ամբաստանելոց հարցաքննութենէն յետոյ դատաւորը խորհրդակցեցան և ապա վկայից հարցաքննութեան սկսան որ երեքշաբթի և չորեքշաբթի օրերու նիստերն ալ դրաւեցին : Վկայք գրեթէ ամէնքն ալ Մէրճանը կը ճանչեն, իսկ իրիսթօն ո'չ, և կը յայտարարեն թէ Մէրճան ոճիրին գիշերը իրենց սենեակը չէ գացած ի Գասըմ-Բաշա : Դատին շարունակութիւնը այսօրուան յետաձգուած է :

— Սպանութիւն մը կատարուեցաւ ի Բերա Բայլօնճու-Բուլլուք վէճի մը հետեանօք : Սպանեալն է Թէվֆիգ էֆ. անուն նաւային սպայ մը. մարդասպանը ձերբակալուած են :

— Կարնոյ թղթատարն այսուհետեւ սուրհանդակի տեղ կառքով պիտի փոխադրուի և քաղաքին մէջ ալ նոր նամակատուն մը պիտի շինուի :

— Սքարա-Բուլի կայարանին աքցանողը աքցանը շարժած պահուն անծանօթ անձի մը կողմանէ սպաննուեր է :

— Սիլեսարի ծովեզերքէն Բարաաքէվա անուն վաթսուն ամեայ Յոյնի մը դիակը գտնուեցաւ երեքշաբթի :

— Հինգ գողեր ձերբակալուած են զէն ի ձեռին Բուսէլի Ֆէնէրի գիւղին Յունաց եկեղեցւոյ ետեւէն :

— Ամասիոյ վճռագրոց նախորդ գործադիր պաշտօնեայ Հասան էֆ. որ զեղծմանց համար դատի ենթարկուած էր, պաշտօնադրութեան և եռամսեայ բանտարկութեան դատապարտուած է :

— Զմիւռնիոյ մէջ Նիքօլիտի աւանտաբ Յոյն վաճառական մը 8000 ոսկի պարտքով սնանկացեր է :

— Պաղասէն Պարսկաստան դացող թղթատարն անցեալները խանքինի մօտերը կողոպտուեր է. թէպէտ աւազակները ձերբակալուեր, սակայն թղթատարական պայուսակները դեռ չեն գտնուեր :

— Ելմտական նոր ծրագիրը զոր մատուցած են Պ. Պ. Լէօն և Ազարեան, Ելմտական նախարարութեան մէջ քննուելէ յետոյ հիմակ ալ յատուկ յանձնաժողովոյ մը կողմէ քննուելով, նպատաւոր տեղեկագիր մատուցուած է :

— Տիարպէիի մէջ ապրիլ 19ին մեծ չքով տեղի ունեցեր է Միլլի Աշիթէթէն կազմուած Համիտիյէ 36^{րդ} հեծելազօնդին սպայից և զօրաց երդման արարողութիւնը :

— Լիւլէ-Պուրկազի մէջ Հասան անուն մարդասպանը կախաղան հանուեր է :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

Կիւմիւլեխանէ, Պ. Մ. Յ. — Կարող էք նամակադրուիլ զրիւլ, Յարմար դատածները միայն կը հրատարակուին :

Ամասիա, Յ. Բ. — Այո՛, վճարած էք տարեկանը :

Մարաշ, Ն. 2. — Ապառիկ չեն զըրկուիր բաղդատումը :

Խարբերդ, Մ. Ն. — Կարող էք այդ կարգի յանձնարարութիւններ ընել մեզ :

Եդեսիա, Ս. Յ. — Ձը վճարեցին այդ գումարը, վասն զի դրամ չէք զրկեր իրենց :

Ա Ր Ժ Է Ք Դ Ր Ա Մ Ո Յ

Օսմ. լիւան 100 զըշ. էն

Մեծիախէ	108	4	Վեցնոց	102	20
Քառորդ մէճիա	106	25	Բուսիոյ բօլ	89	35
Մանր մէճիա	101	10	Նարուէն	87	27
Մէթալիք	99		Գրիմից	51	15
Հինգնոց	101	20	Անգլ. լիւան	110	4

Մանէթ թղթատարած 8 58

Գոնսոլիտէ	22	7	Բուս. երկ.	80
Թահվիլ. Օսմ.	83	13	Թատլիյէ	48



MAISON PHENIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղիմաց, ձեւակեղիմաց եւ Բոդեղիմաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Րիւմպլիի աշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորաձեւութեանց համաձայն չինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուրքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

Շապկի կտաւեայ	Հատը	14 5 47 1/2
» գունաւոր տպածոյ	»	10 5 28
» ֆանէլա	»	21 5 42
» գիշերանոց	»	12 5 27
Անդրաժարտիկ	»	10 5 21
» մատամբօլ	»	15 5 22
Օձիք կտաւեայ	տուզինան	17 5 54
» Թեւոց	»	29 5 65
Թաշկինակ այլ և այլ տեսակ	»	14 5 135
Գուլպաներ՝ ֆիլ տ'էքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	»	29 5 145
Փողկապ այլ և այլ տեսակ	տուզինան	3 5 19

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

Շապկի՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրօտըրիով	Հատը	15 5 27
» » » տանթեկայով	»	18 5 31
Վարտիկ » » » »	»	14 5 22
Վարտիկ » » » պրօտըրիով	»	11 5 24
Միսօ » » » »	»	20 5 38
» » » տանթեկայով	»	25 5 65
Բօրսէ՝ Բարիզի Կուրտէ գործատան	»	26 5 70
Բօրսաժ բամպակեայ, մետաքսեայ	»	11 5 26
Փանէլա լաւագոյն տեսակէն	»	15 5 40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով	20 5 39
» » գունաւոր 6 և 12 »	65 5 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 5 17
Գուլպայ՝ ֆիլ տ'էքօս, բրդեայ, բամպակեայ	40 5 145
Կտաւ Վիլի, մէթրը	3 5 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	2 5 5 1/2

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին:

18—52

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՄԻԱԿ ՄԻՋՈՑ

ԱՃԱՊԱՐԵՑԷՔ ՓՈՐՁԵԼ ՁԵՐ ԲԱՂԴԷ, ԵԹԷ ԿՈՒՋԷՔ ՇԱՀԻՂ

Երեւ հարիւր հազար Ֆրանկ

Վճարելով միայն 10 դրոշ

Արեւելեան Երկ. 134րդ. վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ մայիս 20ին, 600 անձինք պիտի շահին: Գաւառներէն վիճակահանութեան մասնակցիլ փափաքողք պարտին զրկել տոմսի գինն 10 դրոշ, և փոստի ծախուց համար 40 փարա աւելի, նամակագրօշմ ևս կ'ընդունիմք:

درعهاده غلطهده جلیانی و اندریا باقعهده مدیرینه

Առ Տնօրէնութիւն «Ճիլեանի» և Անտրէայ դրամատան

Կալաթա, Քարաքէօյ, Թիւ 23. Կ. Պոլիս

ՆՈՐ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ

Բաւոք 30,000

ՅՕՐԻՆԵԱՑ

ՍԻՄՈՆ ԳԱԲՍՄԱՃԵԱՆ

Սոյն բառագիրքը ըստ կարեւորն կը դիւրացնէ Հայ լեզուի ուսումն, կ'ամփոփէ յինքեան նախնեաց մատենագրութեան բառեր, նորաբանութիւններ, դիցաբանական անուններ, գիտական և գաւառական բառեր, որոց ամենքն մասնաւոր խնամօք ճշդուած են շնորհիւ խղճամիտ հետազոտութեանց և օգնականութեամբ այլ և այլ հեղինակութեանց, որպիսիք են ի մէջ այլոց՝ Նորայրի Ֆրանսահայ բառագիրքն, Վեներոյ նորարար Գիտական բառարանն, Նուպարեանն և Տէմիրճիպաշեանի գրքպանի բառագիրքն: Ասոնցմէ զատ զանազան ձեռագրեր, բժշկարաններ, տաղեր, և այլն նպաստած են գործոյն յորինման:

Բառարանիս առաւելութիւններէն մին է բարդ և ածանց բառերու ուսումն դիւրացնել զնահատելի նորութեամբ մը:

Մէն մի օրինակն, ընտիր լաթականգմ, կը վաճառի Կ. Պօլսոյ համար 15, իսկ գաւառաց համար թղթատարական ծախուց պատճառաւ 18 դահեկան:

Կեդրոնատեղի, Կ. Պօլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 29 վաճառատունն: Նաև Ն. Կ. Պէրպէրեան տպարանը, և ամէն հայ գրավաճառաց քով:

ԱՌԱՋՆՈՐԴ ՓՐԿՈՒԹԵԱՆ

Գրեց

ԳԱՅՐԻԷԼ ԳԱՀԱՆԱՑ ԿԻՒՐԼԷԻ

Սոյն գիրքը, վաւերացեալ ի Կրօն. ժողովոյ Ազգ. Կեդր. վարչութեան, կը պարունակէ կրօնական ու բարոյական այնպիսի խրատներ, որք մարդուս հոգին ու միտքը կը թելով կը յորդորեն զգուշանալ մոլութիւններէ և սիրել զառաքինութիւն, տարելով իրիւ ճշմարիտ Հայ-քրիստոնէայ: Նաև ունի ճշգրիտ բազմաթիւ Տէրունական աղօթիչ, Տաճարանայ օրինաց և Եօթն մեծացու մկրաց նկատմամբ:

Այս գործ արժանի է բարձրութեան, որովհետեւ այս վերջին ժամանակաց մէջ առաջին անգամն է որ քահանայի մը, մանաւանդ գիւղացի քահանայի մը սրտէն ու գրչէն կը բղխի այնպիսի լաւագոյն և բարոյախօս գործ մը:

Գինն է 5 դրոշ:

Գաւառներէն ու զոյնները պէտք է դիմեն «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին, զրկելով նաև փոստի ծախքը:

Ս Ա Մ Փ Ս Ո Ն

ԱՃՈՒՄՆ ԵՒ ԵՐԿԱՐՈՒՄՆ ՄԱՋԵՐՈՒ

Կ. Պոլիս, 15 Մուհարրէմ, և 8 Օգոստ, 1307

Տեսարժան Երբարժ,

Ինչպէս որ ի Խաչիկ

1305 թուականին էր որ Ձեզ հետ մէկ տեսութեան մէջ՝ նախապէս տեղեակ լինելով արհեստի մէջ Ձեր ունեցած ճարտարութեան և լուրջ արուեստասիրութեան՝ խնդրեցի մազերը երկարող, աճեցնող և հիւանդ արմատները կենդանացնող պատրաստութիւն մը իմ աղջկանցս համար:

Ոոստացաք իբր փորձ ի մասնաւորի պատրաստել այդպիսի դեղ մը, պայմանաւ որ երբէք չպիտի պարունակէր իւր բաղադրութեան մէջ հակառողջական նիւթեր, և ըստ Ձեր խոստման զրկեցիք ինձ երեք չիլ սոյն դեղէն:

Արդ՝ ինչպէս յայտնած եմ հրապարակաւ շնորհակալութիւնս 14 մուհարրէմ և 7 Օգոստ. թուականի «Սաատէթ» լրագրոյ միջոցաւ, նմանապէս սոյն մասնաւոր գրութեամբս կը յայտնեմ խնդակցութիւնս, վասն զի Ձեր պատրաստութիւն յաջողապէս պատկուեցաւ, աճեցնելով, երկարելով և գեղեցկացնելով աղջկանցս մազերը, և կը յաւելում թէ այդ դեղ չպարունակեր իւր մէջ հակառողջական նիւթեր այլ և այլ պատրաստութեանց նման:

Ընդունեցէք շնորհակալութիւնս թորգարուի Կայս. Պալատան պահեստի զօրաց բժիշկ

դեր հազարապետ
Հիւսէթի

2-10

Փ Ո Ր Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ Փ Ա Լ Ա Գ Ա Շ Ե Ա Ն

Կ. Պոլիս, Ուզուն Զարեի, 402

Փորագրատանս մէջ կը փորագրուին մեծ խնամօք և փութով ամէն տեսակ կնիք և պատկեր՝ լաստիկի, փայտի, և մետաղներու վրայ, կը փորագրուին տպագրական ամէն տեսակ և ամէն լեզուէ տառերու պողպատներ, կը պատրաստուին կալվանօ կաղապարներ, զինկոյէ տառեր և թուանշաններ, ևն. ևն:

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Լսկի-Ջապրիէ փողոց, թիւ 61

ԳԱՒԱՌԱՑԻՈՑ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Գաւառաց մէջ շատ անգամ կը պատահին այնպիսի դատեր ու գործառնութիւններ որոնք, իրենց բնութեամբ և ըստ օրինի, Պոլիս փոխադրուելով միայն կրնան շարունակուիլ և իրենց լուծումը գտնել. այս կարգէն են Վճռաշինջ Ատենին ներկայանալի դատերը (թէմիզ), օտար հպատակաց հետ գաւառաց մէջ տեսնուած դատերուն վերաքննութիւնը (խսքիմաֆ), Թէսքիմաքը Շէրի վերաբերեալ դատեր, Ֆէքվախանէի վերաբերեալ գործեր, ևայլն, ևայլն:

Գաւառացիք յաճախ պարտաւորուած կը լինին այսպիսի դատերու և գործերու համար ի Պոլիս փոխանորդ մը կարգել իրենց, բայց դիւրութիւն չունենալով ճանշնալու մայրաքաղաքիս փաստաբանաց բազմութեան մէջ վստահելիները ու ձեռնհասները, հազար դժուարութեանց կը հանդպին, և յաճախ անկարող կամ անփոյթ մարդոց գործ յանձնելով, վերջ ի վերջոյ կը կորուսանեն իրենց իրաւունքը:

Դատական այս կարգի խնդրոց մէջ գաւառացւոց ծառայութիւն մը մատուցանելու համար, «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակը կապակցութիւններ հաստատած է մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն մի քանիին հետ: Կը հրաւիրուին այս կարգադրութենէն օգտուիլ նոքա որք այդ տեսակ գործեր ունին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

134րդ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ մայիս 20 ին: Մեծ պարգեւն է

300,000 ՖՐԱՆԿ ԿԱՄ 13,200 ԳԱՂ. ՈՍԿԻ

Պիտի շահին 600 անձինք: Ամենէն փոքր պարգեւն է 400 ֆրանք: Բաղդատումը վաւերացեալ են Օսմանեան առեւտրական նախարարութենէն:

Գիւն թաղարտումի 10 դրոշ:

Գաւառներէն ստանալ ուղղորդելու պէտք է դիմեն ԾԱՂԻԿԻ Յանձնակատարութեան Գրասենեակին: Փօստի ծախուց համար պէտք է զրկել մէկ զրուշ աւելի:

Շահող թուոց ճիշդ ցուցակը կը հրատարակուի ԾԱՂԻԿԻ մէջ:

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԱԿԱՌԱՌ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՅՆ ԵՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՑ, ԱՄԵՆԷՆ ԹՈՒՐԿԻՈՑ ԵՒ ԵՐԿԱՌՈՒՄՆ ՄԷՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈԼՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքովը:

ԳԼԽԱՌՈՐ ՄԹԵՐԱՆՈՑԻ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնիլի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Գ

Հռոմոս, Քափալլա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սախտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Բիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիլէ, ևայլն, ևայլն: